

19875

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ ԱՌԴՐ ԽԵՐԿՐՄԵՐԻ, ԱՀԱՅԵՐ

ՀԵՂԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՆՃԵՎԻԶՄԻ
ՓԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

329.14
R - 13

ԿՈՒՍԴՐՈՒ 1934

ԽՈՐԵՎԱՆ

Са 34-К
816

329-14
4-13

15 JAN 2010

Արքայի գրքի պահպանության համար
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ Ե Ն Ր Ի

БИБЛИОГРАФИЯ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՆՏԵՎԻԶՄԻ
ԺԱՄԱՍԿԱԿԻՑ
ՓԻԼԻՍՊԱՅԻԹՅՈՒՆ

ԿՈՒՍՈՎՅԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
6 Ե Ր Ե Վ Ա Ռ Ե 1934



19775

ԱՌԱՋԱԲԱՆ

Իրավացիորեն, զլխավոր հականեղափոխական ուժը յերկրի ներսում համարելով Դաշնակցությունը և կենտրոնացնելով պայքարը նրա դեմ, միանգամայն անիրափացի կերպով, մեր մամուլի և հրատարակչական այլ որդանների կողմից հարկ յեղած ուշադրության չի արժանացել պայքարը նաև հայկական մենշերմի դեմ: Իհարկե, ընդհանուր խնդիրներն իրենց ընդհանուր ձևերով բազմիցս քննության են առնվել մեր մամուլում, սակայն վոր այդ լայն չափով կատարվի իր սպեցիֆիկ ձևով արտահայտվող հայկական մենշերմի հանդեպ ևս, ահա այս բնագավառումն ե, վոր մինչև որս թերացել ենք և շարունակում ենք թերանալ:

Ներկա գրքույկը հիշատակված մի շաբթ խնդիրների քննության նվիրված հոդվածների ժողովածույթ, վորոնք 1928 թ. լույս են տեսել «Կոմունիստ» և «Լենինյան ուղի» ամսագրերում: Նրանցում շոշափված մի յերկու, ինչպես, որինակը քաղաքատնտեսության բնորոշման և Փորձացիաների հարցերը քննվել են զուտ ընդհանուր մեթոդով հական հարցադրման և դրանցից արվող քաղաքական յեղբակացությունների տեսակետից և այն ել շատ ընդհանուր ու թոռուցիկ կերպով: Վերահրատարակության համար վերանայելիս մենք այդ մասին նոր ավելացումներ չարինք այն պարզ պատճառով, վոր բոգդանովշչինայի, ոռուբինականության և Դուբրովսկու տեսակետների մանրամասն քննադատությունը, Ավդալբեգյանի և նրանց հայցքների միջև յեղած կապի հայտնաբերումն, առանձին ուսումնասիրության գործե, վորը մեր նպատակից դուրս ե: Այս, ինչ վոր մեզ զբաղեցրել ե, դա հիշյալ հարցերում մենշերմիյան-հականեղափոխական տեսակետների հայկական վարիանտի ցուցաբերումն ու քննադատությունն ե, վորը մենք աշխատել ենք կատարել Բայց այդ չի նշանակում, վոր վերեռում հիշատակած հարցերը պետք ե

3760-82

աչքաթող անել: Մեր քաղաքատնտեսները և պատմաբաններն անկասկած ժամանակ կդանեն այդ հարցերով ևս զբաղվելու:

Հաջորդ խնդիրը, վորի մասին ևս կուգենայինք մի քանի խոռք ասել, այդ Պէիսանովի հարցն եւ: Ներկա աշխատության մեջ մենք Պէիսանովի կարծիքներն այս կամ այն հարցի մասին ոգտագործել ենք միծ մասամբ վորպես դրական կարծիքներն չծառանալով նրա սխալների դեմ՝ հատկապես արվեստի բնագավառում: Այդ քայլը մինք կատարել ենք զիտակցաբարք: Ավելարեցյանն ու Խանջանովը շարունակ հենվում են Պէիսանովի վրա, աշխատելով ամրողությամբ նրան իրենցը համարել: Մեր նպատակն եւ յեղել ցույց տալ, վոր դա հիմնովին սխալ ե, վոր տեսության շատ հարցերում Պէիսանովը կանգնած եւ ճիշտ տեսակետի վրա և նրա թողած այդ ժառանգությունը հեղափոխական պրոլետարիատին եւ պատկանում, վոչ թե մենշևկյան հականեղափոխությանը:

Հայաստանում Պէիսանովի սխալները քննադատելու պատըրվակի տակ վերջնը վուսանք փորձեր արին ամրողությամբ ի չիք հայտարարելու նրա թողած ժառանգությունը: Մենք ևս կողմանակից չենք Պէիսանովին հետևողական դիտվեսիկական մասերի հայտարարելու փորձերին, բայց և այնպես չենք կարող բաժանել այն հակալեսինյան տեսակետը, վորը վուսանք ունեն Պէիսանովի թողած ժառանգության մասին, այդ պատճառով եղ մենք մեր պարտքն ենք համարել շատ խնդիրներում հակադրել նրան Ավելարեցյանի պաշտպանած «մարքսիզմին»: Այս բանը կարող եւ վորոշ մարդկանց դուր չգտալ, բայց վայ նրան, ով վոր տեսության սկզբունքային հարցերում անհատական ճաշակներով կառաջնորդվի: Այդ կարգի ճաշակների տեսության համար ներկա գրքույկում զետեղված հոգվածներն իր ժամանակին վորոշ մարդկանց սրտին դրան, բայց չնայած դրան, մենք վորոշ փոփոխություններով, նորից հրատարակության ենք հանձնում, վորովհետև հաստատ համոզված ենք, վոր նրանք դեռ այսոր եւ վորոշ դրական նշանակություն կունենան իդեոլոգիական ֆրոնտում մղվող մեր պայքարում, ոժանդակելով յերիտասարդությանը պարզաբանելու հայկական մենշերովի դիրքը մի շարք հարցերում, վորոնց մասին, միանգամայն անհասկանալի պատճառներով, մեր մասուլը շարունակում եւ լուսություն պահպանելու:

8-ին հոկտեմբերի 1933 թ.

Լենինական:

ՀԵՆՐԻ

ՀՈԴՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Լավ աշակերտներ են յեղել խոռք չկա: Յեթե միջազգային մենշևկզմի ուսուցիչներ՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պարագությները մարքսիզմի հիմնական սկզբունքների ուժիվորակով հող պատրաստեցին բացարձակ կերպով բուրժուազիայի կողմն անցնելու համար, ապա նույն արագ և հայ մենշևկզմը Յեթե այսոր վողջ սոցիալ-դեմոկրատիան նաև գերմանականը, շարունակելով իր այդ զագիր զործը՝ փորձեր եւ անում արգարանալ հայտարարելով, վոր կալիտալիստական արտադրության յեղանակը մնայուն եւ անփոփոխ, ապա զարմանալի հետևողականությամբ դրանից հետ չի մնում նաև հայկական մենշևկզմը: Հին կարգերը ուստավը ցիւ յենթարկելու բազմաթիվ այլ փորձերի հետ միասին, նա այսոր միծ համառությամբ աշխատում եւ ապացուցել, վոր աշխատավորական մասսաների շահագործումը, կամ քաղաքատնեսական լեզվով ասած՝ հավելյալ արժեքը, պետք եւ գոյություն ունենանաւ ապացա սոցիալիստական հասարակության մեջ: Ինչքան ել պայքարենք, ինչքան ել արտադրողական ուժերի աճման շնորհիվ փոփոխության յենթարկենք արտադրական հարցերությունները, ինչպիսիք են՝ արժեքը, հավելյալ արժեքը, փողը, ապրանքը և այլն, միւնույն ե, այդ վերջինները մնալու յեն հավերժ անփոփոխ, ասում են նրանք: Այս հիմնական թեզից ել յենելով, հայ մենշևկիներն այսոր քննության են առնում նաև մեր իրականության վերաբերող կոնկրետ խնդիրները եւ ըստ այնմ ել վորոշում իրենց վերաբերմունքը վոչ միայն դեպի մեր պատմական անցյալը, այլև զալիքը: Քննենք հարցերն ավելի մոտիւ կից, և ընթերցողը կհամոզվի դրանում:

Ա.Վ.ԴԱՎԻԹԵԳԱՅՆԸ ԿԱ.ՊԻՏՈՒ.ԻՉՈՒՄԻ ՀԱՎԵԲԱՑՄԱՆ
ՍՆԱԿԱՑՄԸ ԹԵՌԻՍ.ՅԻ ԶԱՏԱԳՈՎ

Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիային նվիրված իր գրքույկում թ. Ավելարեցյանը քննության եւ առնում և

այն հարցը, թե վերն և քաղաքատնտեսության առարկան, և
ինչ հարցերի ուսումնասիրությամբ և զբաղվում նա, «Քաղաքա-
տնտեսության առարկան,—գրում է Ավագլրեգյանը,—հասարակու-
թյունների (ընդգծ. մերն եւ Հ.) արտադրական տնտեսական հա-
րաբերությունների, տնտեսական կատեգորիաների ու նըանց
որենքների ուսումնասիրությունն ե» (եջ 7): «Հասարակությունն-
ների»: Այս չափազանց կարեւը հանգամանք ե: Ինչպես հայտնի
յե, հասարակություններից մեկն ել մինչկապիտալիստականն ե,
վորտեղ (որինակ, Գերմանիայում 19-րդ դարի սկզբներին), Մարքսի
տակը, քաղաքատնտեսությունը չիր զարգանում, վորովինեւէ
քրացախայում եր պահանջվող հինստական հողը: Այդ հողը կապի-
տալիզմն եր, այն հարաբերությունների զարգացումը, վորոնք
առաջացրին արդի քաղաքատնտեսությունը: Քաղաքատնտեսու-
թյունը տեխնոլոգիա չե, նա արտադրական գասակարգային վորոշ
հարաբերությունների մասին յեղած մի գիտություն ե, այդ պատ-
ճառով ել նա առաջանում է հիշյալ հարաբերությունների զար-
գացման միայն վորոշ շրջանում և ըստ եյության հիմնական փո-
փոխության և յենթարկվում իր ուսումնասիրության ոբյեկտի փո-
փոխման հետեանքով:

Ենդեմն ասում ե, թե քաղաքատնտեսությունը վորպես տար-
րեր հասարակությունների արտադրության և փոխանակության
մասին յեղած մի գիտություն իր լայն առումով ստեղծվելու յե
հետագայում, իսկ լենինն առարկելով Բուլարինին՝ պնդում ե,
վոր սոցիալիստական հասարակության մեջ ևս ուշ վորպես
տնտեսական կատեգորիա չի վերանալու:

Բուրժուական հասարակության սպասարկուներն այս ա-
սածներից այն յեղակացությունն են անում, վոր վորպես թե
մարքուլիմի հիմնադիրների կարծիքով կապիտալիստական հասա-
րակության քաղաքատնտեսական կամացորիաները ոլահալանելու
յեն իրենց գոյությունը նաև կոմունիզմի ժամանակ: Նրանք չեն
հասկանում, վոր ուշ ներկա դեպքում լենինի համար սոսկ ար-
տահայտության միջոց ե և վոչ թե սոցիալիզմի ժամանակ իր
կապիտալիստական բռվանդակությունը պահպանող քաղաքաւըն-
տեսական մի կատեգորիա: Այսոր ել մեր սոցիալիստական ձեռ-
նարկությունների վորդ արտադրանքը չի արվում նույն ձեռնար-
կությունների բանվորներին, զրա մի վորոշ տոկոսն առանձնաց-
վում ե նույն ձեռնարկների լայնացման և բանվորական պետու-

թյան այլ կարիքների համար: Բայց միայն պրոլետարական
դիկտատուրայի հակառակօրդները կարող են ասել, թե դա հավե-
լյալ արժեք ե, քանի վոր վերջինը վորոշ դասակարգային հարա-
բերությունների արդյունք ե, վորոնք տեղ չունեն այլևս մեր
սոցիալիստական արտադրության մեջ: Հետևաբար այն ուշ, վորի
մասին խոսում ե լենինը, վոչ մի առնչություն չունի կապիտա-
լիզմի ժամանակ արտադրվող հավելյալ արժեքի հետ բացի իր
արտաքին արտահայտության ձերից:

Նույնը կարելի յե ասել և քաղաքատնտեսության մասին:
Յեթե ենդեմն ասում ե, թե քաղաքատնտեսությունն իր լայն
առումով ստեղծվելու յե միայն հետագայում, դրանից բնագ չի
հետևում այն միտքը, թե նու պատմական գիտուրյան չե և երա բավան-
դագուրյանը բոլոր ցըտներումն ել նույնն ել լինելու:

Ընդհակառակը, Ենդեմն ասում են վոր այն պայմանները,
վորոնց ներկայությամբ մարդիկ արտադրում և փոխանակու-
թյուն են կատարում, տաքեր յերկրների համար միատեսակ չեն
և սերնդից սերունդ, ամեն յերկրում փոփոխության են յենթարկ-
վում: Քաղաքատնտեսությունն այդ իսկ պատճեառով ել բոլոր յերկրների և բոլոր եպօխաների համար չի կարող միենուոյնը լինել: . . . Քաղաքատնտեսությունը, ըստ իր եյու-
րյան պատմական գիտուրյան ե, նա «կապիտալիստական ցըտնի
արտադրույան սենտեսական հարցերի գիտական նետազուրյունն ե»: Բայց այդ բնավլ չի նշանակում, վոր առանձին թեորեմաներ չեն կարող չկունիվել զեռնս հին հունական հասարակության գրա-
կանագեաների կողմից, ամելացնում և Ենդեմը: Յեկ այդ միան-
դամայն հասկանալի յե: Չե վոր հին Հունաստանում ևս գոյու-
թյուն ունեին ապրանքային վորոշ հարաբերություններ, վորոնք
այս կամ այն կերպ պետք ե վոր արտահայտություն գտնելին
ժամանակակից դիտությունների մեջ: Այսպիսով Ենդեմը բնավլ
կամ չունի այն մարդկանց հետ, վորոնք կապիտալիզմը հավել-
ժացնելու մարմադով բռնված՝ քաղաքատնտեսության բախու-
սոսկ պատրիակ են ծառայեցնում զրա համար:

Ավագլրեգյանին բնագ չի հետաքրքրում այն խնդիրը, թե
ինչ զիտությունն ե ուսումնասիրելու նախա և հետկապիտալիստա-
կան տնտեսությունների, նա մտահոգված ե միայն մի բանով—

ապացուցել, վոր ներկա քաղաքատնտեսական կատեղորիաները հավերժ անփոփոխ են:

«Քաղաքատնտեսությունը հետազոտում է, որինակ, թե ի՞նչ և աշխատանքը, ի՞նչ և արժեքը, հավելյալ արժեքը, ապրանքը, փողը և այլն»: Բարի: Այդ նույն քաղաքատնտեսությունը լինելու յե նաև «հետկապիտալիստական», այսինքն՝ կոմունիստական հասարակության մեջ, Յեղ վորովհետեւ նա այդ ժամանակն ել գոյություն և ունենալու և զբագլելու յե հավելյալ արժեքի ուսումնասիրության խնդրով, հետևաբար հավելյալ արժեքը գոյություն և ունենալու և վաղվասոցիստական հասարակության մեջ: Ուրիշ յեզրակացություն հնարավոր չե անել Ավտալրեդյանի ասածներից: Ռիկարդոն ասել ե, վոր առաջին ձկնորսն առաջին կապիտալիստն ե յեղել: Ավտալրեդյանն ավելացնում ե նաև ապագա կոմունիստական հասարակության տնտեսավարը: Բարի գուգաղիսկություն, բայց միայն թե ձեռք վերցրեք բանվոր դասակարգից և այդ բոլորին մարքսիզմ անուն մի տաք:

Ենքելու գտնում ե, վոր «հավելյալ արժեքը կապիտալիստական արտադրության հիմքն ե», վոր «կապիտալիզմը պատմականորեն պայմանավորված, պատմականորեն վորոշ շրջանի համար անհրաժեշտ, ուրեմն և անցողիկ մի ձե » (Անդ-Դյորին, եջ 8): Իսկ Ավտալրեդյանն հարցի իր դրման յեղանակով ուղղակի հակառակ յեզրակացության և հանդում և մի այլ աեղ ել նա արդեն բացարձակ կերպով հայտարարում և այն մասին, վոր ապրանքը, ունտուն և մնացոծ կատեղորիաները հատուկ են պատմական նաև մյօւս շրջաններին («Ենորք», 25 թ. և 5—6, եջ 381): Բայց որինակ ի՞նչ և ապրանքը. ըստ մարքսիզմի դա արտադրական վարոշ հարաբերություն ե, ապրանքային—կապիտալիստական հասարակության արտադրական հարաբերություն: «Ապրանքային շրջանառությունը կապիտալի յելման կետն ե» (Կապիտալ, I, ստր. 116): «Հասարակությունների հարստությունը, վորոնց սեղ թագավորում և կապիտալիստական արտադրության յեղանակը, ներկաւ յորպես «ապրանքների հսկայական կուտակում» (եջ 1):

Ի՞նչ ե՞ ունտան,—կրկին հասարակական արտադրական մի հարաբերություն: Ունտան՝ այդ բանվոր դասակարգից քամվող նույն հավելյալ արժեքի մի մասն ե, վոր յուրացնում և հողատեր դասակարգը:

Արդյոք միշտ ժամանակակից ունտան գոյությունն է ունեցել և կամ թե ունտան լինելու յե ապագայում: Վոչ և . . . Այնպիսի հասարակական ձևերի ժամանակ, վորտեղ գեռուս կապիտալ գոյություն չունի, վորն այն փունկցիան և կատարում, վոր քամում և վողջ հավելյալ աշխատանքը և յուրացնում և ամբողջ հավելյալ արժեքը, այնտեղ, վորտեղ կապիտալը գեռուս իրեն չի յենթարկել հասարակական աշխատանքը և կամ թե յենթարկել ե միայն վորոշ տեղերումք ընդհանրապես խոսք չի կարող լինել ժամանակակից իմաստով ունտայի մասին» . . . «Ունտան, նույնիսկ այն ժամանակ, յերբ այդ վճարվում է իր նատուրալ ձևով. . . քամվում և գյուղատնտեսական մթերքների արժեքից» . . . (Կալ III Վ. II. ստր. 319): Գյուղատնտեսական և ընդհանրապես մթերքներին փոխանցվող նոր արժեքները լինում են միայն մարդկային բանավորական ուժից, հետևաբար խոսել գյուղատնտեսական մթերքների արժեքից» քամվող ունտայի մասին, այդ միենույն ե, թե խոսել գյուղատնտեսական բանվորների շահագործման մասին:

Յեթե այդ բոլորն այդպես ե, իսկ այդ անպայման այդպես ե, այժմ մի և ծիցտ, Ավտալրեդյանը, թե Մարքսը: Արժեքը, հավելյալ արժեքը, ապրանքը, ունտան, պատմական,—թե արտադրանական կատեղորիաներ են: Ապրանքային-կապիտալիստական արտադրության յեղանակը մնային, թե անցողիկ մի ձե ե: Այս հարցին պատմախանում և հայկական մենշևիզմի այլ պարագայում՝ Խանզադյանը: Նա այն համոզմանն ե, վոր բոլոր դեպքերումն ել արտադրությանն Ավտալրեդյանի կողմնե, հակառակ պարագային ի՞նչպես ապացուցել և ինչպի արդարացնել Ահարոնյանին Մարքս հայտարարելու, մարքսիզմը ահարոնյանիզմին հավասարեցնելու թերիսան:

Ավտալրեդյանի նպատակն եր, ինչպես տեսանք, ապացուցել վոր կապիտալիստական հասարակության արտադրական տնտեսական կատեղորիաները (արժեքը, հավելյան արժեքը, ունտան և այլն) հետևաբար և կապիտալիզմը, վոչ թե անցողիկ են ու պատմական, այլ մշտական են և անփոփոխ: Իսկ Խանզադյանը, ինչպես կտեսնենք հետադայում, այդ հիմնական թեզն ի նկատի ունենալով ձգտում է արդարացնել հայ բուրժուազիայի միակ հետևական կուսակցության, Խանզակցության գործունեցությունը, համարելով նրա բոնած գիծը ծիցտ, կատարած գործը—պրոլետարիատի համար գնահատելի:

ԹԵ ԽՆՉՊԵՍ Ե ԽԱՆՉԱԴԱՐԱՆՆ ԱՐԴԱՐԱՅՆՈՒՄ
ԳԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Խանղադյանը Դաշնակցությանն արդարացնելու իր փորձն սկսում է նրանով, վոր Ա. Ահարոնյանի մասին գրած իր գրքում հայտարարում ե.—«բանվարելու նայելում չունեն, ասել և Մարքուր, Տանջվածներն ու կեղելվածները լեզրայնեն են, ինք նույնիսկ զոկովի ատղերի վրա ապրեն, ասում ե Ահարոնյանը» (ընդգծ. հեղ): Ցեղակացություն.—Ահարոնյանն՝ պիտի շուտ և մարքսիստական խոսք ասել հայ իրականության մեջ, քան հայ մարքսիստները: Այս և Խանղադյանի փորացավը, բայց նու սիրտ չի անում բացե ի բաց հայտարարելու այդ մասին, վորովճետե այսորվա պիոներն անզամ կառի, վոր դա գրպարաւություն և մարքսիդմի հասցեյին: Այս բանը Խանղադյանը շատ լավ է հասկանում, այդ պատճառով ել փորձում և կապիտալիզմի իր սպասարկման գործը շղարշել այլ և այլ ֆրազներով:

Ահարոնյանը յեղայրասիրություն և քարոզում, նրա «զըրվածքները միշտ ներշնչված են ամենալայն մարդասիրական զգացմունքներով»: Նա միշտ ել «բարձր և սրանել մարդասիրության անբիծ գրոշակը», բարբառում ե Խանղադյանը: Ցենթազբենք, վոր այդ գովքը ճիշտ ե, բայց չե վոր Ահարոնյանի թմրկահարածը սովորական բուրժուատական հույսնարդման ե, վորը վոչ մի կապ չունի պրոլետարական ինտերնացիոնալիզմի հետ: Բուրժուատական հումանիզմը դեմ և պրոլետարիատի ակարիք քաղաքական պայքարին, նա միշտ է շահագործող գասակարգի ներկայացուցիչների ու նրա ջատագովների ձեռքին՝ հետ պահելու բանվորներին իրենց գիետատուրայի համար մղվող բարիկադային կովից: Այդպես չե պրոլետարական ինտերնացիոնալիզմը: Խսկական յեղայրություն աղդերի և ժողովուրդների միջև հնարավոր և ստեղծել միմիայն բոլոր աղդերի շահագործող դասակարգերի բոնի տապալման ճանապարհով: Այսպես և դատում Ահարոնյանը: Խանղադյանը միշտ է իրտ սիրտ չի անում հարցն այդ կերպ զներ, վորովճետե վոչ մի կերպ հնարավոր չե թաղցնել գորշ իրականությունը: Ահարոնյանը հայ մարտնչող բուրժուազիայի իդեոլոգն է: Տարիներ շարունակ նա սերունդներ և դաստիարակել վոչ թե մարդասիրության (թե կուզ բուրժուական), այլ ամենաակատաղի նացիոնալիզմով տողորդած: Ճիշտ է, նա խոսում է «տանջվածների» մասին, բայց վոչ բոլոր աղդերի կամ «ջոկ-ջոկ աստղերի վրա» ապրող տանջված-

ների մասին, վորովինետև թուրքերի հանդեպ նրա քարոզած վանդակական ատելությունը բնավ նման չե կեղեքվածներին իմի հավաքելու և շահագործողների դեմ հանելու մարքսիստական քարոզին: Պնդելով հակառակը՝ Խանղադյանը պարզապես կեղծում ե իրականությունը, վորպեսովի կարողանա նորից թող փչել հայ մանր բուրժուազիայի աչքերին՝ նրան Դաշնակցության հետեւց քաշ տալու նպատակով:

«Վորքան վոր կնճուտ և դժվար լուծելի յե աղգային խընդիրը գործնականում, նույնքան, յիս կարծում եմ, պարզ և անվիճելի յե այն տնտեսականապես: Սակայն այսպիսի վերաբերմունքը դեպի ազգային խնդիրը՝ չի խանգարում տեսնել Փրանսիական հեղափոխության ահազին նշանակությունը պատմության մեջ, նկատի ունենալով նախընթաց Լյուդովիկյան շրջանը: Նույնը պետք ե ասել և հունական, իտալական շարժումների մասին: Այս տեսակետից յես գտնում եմ, վոր վերջին շարժումները մեծ պատմական նշանակություն ունեն մեր ժողովրդի կյանքում» (եջ 30—31): Հետեղողական տրամաբանությունը Խանղադյանի համար պարտադիր չե: Քիչ առաջ նա Ահարոնյանին, այսինքն Դաշնակցության իդեոլոգներից մեկին, Մարքս հայտարարեց, իսկ հիմա ձգնում և ապացուցել, վոր Խաժակը, Ռուբեն փաշան կամ Իշխանը Ռոբեռսիեր, Դանատոն կամ Մարտան նու ձաշակների վրա բունանալ անշուշտ չի կարելի, բայց քիչ թե շատ իրեն հարգույ անձնավոր աշխատի, նաևն ինդիքների մասին խոսելիս, պետք և աշխատի վորոշ գիտական լըջություն պահպանել:

Մեր որերի վոչ թե զիտականը, այլ մանուկն անդամ գիտե, վոր Փրանսիական հեղափոխությունը՝ յերբորդ դասի կանանդակիան ընդլցումներն եւ ուղղված կործանվող ավատականության զեմ: Բուրժուազիայի հաղթանակն այդ ժամանակ հեղափոխական, պըողբեսիվ յերեսութ եր: Արտազրողական ուժերն իրենց զարգացման ընթացքում դեմ եյն առել Փեոդալական արտադրական հարաբերություններին և այլես զարգանալ չեյին կարող Յերբորդ զամն իր հեղափոխությամբ փրկեց այդ կապանքները և մարդկության պըողբեսի համար մեծ հնարավորություններ ստեղծեց: Խսկ ինչի՞ դեմ եր կովում հայ բուրժուազիան Արդյոք հայ ավատականությամբ: Վոչ ինարկե, նա կովում եր վոչ հայրենի կապիտալիզմի դեմ, հանուն իր կապիտալի թագաւորության: Վերն եր հայ բանվոր դասակարգին և ընդ-

հանրապես հայ աշխատավորությանը ձեռնտու, լինել հարեան ազգերի հեղափոխական պրոլետարիատի հետ և իր սեփական բութուազիայի դեմ, թե ընդհակառակը: Մարքսն ու Ենգելը դեռ «Կոմունիստական մանիժեստում» առաջին տեսակետի վրա յեն կանգնել և այդպես ել դաստիարակել բոլոր յերկրների պրոլետարական հեղափոխականներին:

Բայց այդ Խանզադյանի համար չի ասված, վրը շարունակելով արդարացնել հայ բութուազիայի կուսակցությանը փարձում և հավասարության նշան դնել այս անգամ արդեն դաշնակցական շարժումների և հույն, իտալական ժողովուրդների հեղափոխական ընդդումների միջև: Յերկույթների կոնկրետ պատճական ուսումնասիրությունը Խանզադյանի համար բնավ ել պարտադիր չե, այդ պատճառով ել նա չի կարող ըմբռնել, վոր յեթե արդյունաբերական կապիտալի ծագման սկզբնական շրջանում հեղափոխական կարելի յեր համարել ամեն մի շարժում, վորն այս կամ այն կերպ ուղղված եր դեռևս իրենց տիրապետության կապանքներն ամուր պահած հետամնաց ֆեոդալական յերկրների գեմ, ապա նույնը չի կարելի անել իմակերիալիստական կապիտալիզմի շրջանում: Առաջին շրջանում այդ շարժումների հեռանկարները միջազգային հեղափոխության հաղթանակի հեռանկարների հետ կապելը միամտություն կլիներ, քանի վոր վերջինը դեռևս բավականին հեռու յեր: Իսկ 19-րդ դարի վերջերքից սկսած պայմանները հիմնովին փոխվում են, անտեսական գերիշանությունն անցնում և ջիւնանսական կապիտալի ձեռքը և ստեղծվում և դասակարգերի մի այնպիսի փոխարաբերություն, յերը ճնշված ժողովուրդների ազատազրումը հնարավոր և դառնում միմիայն տյա ժամանակի, յերը այդ սերտ կերպով կապվում և միջազդային պրոլետարական հեղափոխության հաղթանակի հետ: Այս «փոքրիկ» հանգամանքը Խանզադյանը, ըստ յերկութին, սոսացաւթյան և տվել և դրա համար ել գանում և, վոր Դաշնակցության «քննադատաների սովորական մատծելաբերպը սիալ ե» և «վերջի վերջո» դաշնակցական «վերջին շարժումները պիտք և համարել դրական»: Վորմնը են այդ վերջին շարժումները, գուցե կամավորական գնդերի կազմուերպմամբ: Բայց միլիոնավոր աշխատավորների անտեղի արյունահօսությունը յերբեք դրական համարել չի կարելի, այդ պատճառով ել միանդամայն ճիշտ և Շահումյանը յերը դրում ե: «Դաշնակցությունը քա-

զաքական հեղափոխական կուսակցություն չի յեղել յերբեք»... (Շահումյան, հ. 1-ին, էջ 159): 20-րդ դարում, միջազգային պրոլետարական հեղափոխության վերելքի նոր շրջանում, դաշնակցության հետապնդած ազգային-իմպերիալիստական նպատակները վոչ թե հեղափոխական, այլ ամենահետեղական հական հեղափոխական կուսակցության գործը կարող եր լինել: Սկզբանական շրջանում Դաշնակցությունը հանդես գալով տաճկահայրի համար վորակես «Փիլանտրոպիական մի բնելեռուրյան», դրական վոչինչ չկարողացավ անել: Բայց, յերբ Անդրկովկասումն ել դասակարգային պայքարը սուր բնույթ ստացավ և անհրաժեշտ եր բութուազիայի շահերը պաշտպանել, Դաշնակցությունը «մի քայլ առաջ գնաց ղարթնող ժողովրդի հետ» նպատակ ունենալով բռնել նրա հետեւյց ու շարժմանը հնարավորություն չտալ ծավալելու ու շեղվելու այդ կուսակցության իդեալների ճանապարհից»: Այսպիսով հանձինս դաշնակցականների «մեռյալները գնում եյին, վորակազի բռնեն կենդանիներին» (էջ 61-62): Խանզադյանն այս տեսակետը համարում ե սիալ և առաջարկում ե «իմանալ, թե ինչ եյին ուզում անել մարդիկ, և քննել թե ինչ կարող եյին անել»:

Ի՞նչ եյին ուզում անել դաշնակցականները: Զարմանալի հարց, ի՞նչ ե ուզում անել բութուական ամեն մի կուսակցություն, նույն ել դաշնակցականները:

«Ի՞նչ կարող եյին անել»: Յեթե մինչև 1905 թ. Դաշնակցության գործունեյությունը մանր բութուաններին այն համոզւման եր բիրել վոր նրանք իրենց համար կարող եյին դրական վորեւան կատարել, սակայն հետաքա դեպքերն այդ հույսն ել խորտակեցին: Այսոր բոլորը, բացի հայ մենշևիկներից, այն համոզումն ունեն, վոր Դաշնակցությունը չեր, վոր մեր աշխատավորական մասաներին պիտի փրկեր, այլ իրենց նույն բանվոր դասակարգի և աշխատավորական մյուս զանգվածների գործն եր այդ, վորոնց հեղափոխական ընդդումը պիտի լիներ առաջին հերթին նույն Դաշնակցության դեմ: Այսպես ել յեղավ:

Սակայն, հայկական մենշևիզմի պարագլուխները դեռ այսոր ել կակալորույս փորձեր են անում բացասել այդ: Նրանք աշխատում են ապացուցել այն, ինչ վոր պատմությունը հերքեց, նրանք ձգտում են մեր աշխատավորական մասսաների վրա զցել Դաշնակցության ու նրա ղեկավարների մեղքը:

«Ահարոնյանի մեղքը չե..., վոր նրա յեղբայրասիրական քառողջը մեր կյանքի պայմաններում հաճախ բնկրեկիվ ե, վորպես թունոտ շովինիզմ» (եջ 52—53): Միանգամայն ճիշտ է, «բեկրեկում մեջ Ահարոնյանը և վոչ մի մեղք չունի, «մեղափորը» բանվոր դասակարգն ե, վոր հակառակ Խանզադյանի ցանկությանը՝ կարողացել և ճիշտ կերպով ըմբոնել և «բեկրեկիվ» հեղինակի միտքը: Ահարոնյանի «մեղքը» միայն նրա մեջ ե, վոր նա հաւաքատորեն դրսեորել և իր դասակարգի իդեոլոգիան:

Այսպես և գնահատում Խանզադյանն Ահարոնյանի գրական գործունեյության սոցիալական արժեքը: Նա վոչինչ չի խնայում հայ բուրժուազիայի թունոտ շովինիզմը ինտերնացիոնալիզմ հայտարարելու համար, մարդակերությունը՝ մարդասիրություն:

Բայց կարող են լինել մարդիկ, վորոնք զարմանքով հայրցնեն, թե ի՞նչպես պատահեց և ի՞նչիվ բացատրել այն, վոր բանվոր դասակարգի յերեմի «բարեկամներն» այսոր նրա թշնամիներն են դառել, և կամ թե ի՞նչպես հասկանալ այն, յերբ մարդիկ մի ժամանակ քայլել են պրոլետարիատի հետ (թեև այդ բանը հայ մենշևիզմի մասին յերբեք չի կարելի ասել), բայց այսոր արդեն ակնհայտ կերպով գեմ են գնում նրա շարժմանը: Թվում ե, թե բավականաշափ հասկանալի յեն ոլատճառները:

Մարքսը, խոսելով բանվոր դասակարգի գոյացման մասին, այն բաժանել է յերկու գլխավոր շրջանների. 1) «դասակարգն ինքըն իր մեջ» և 2) «դասակարգն ինքն իր համար»: Պրոլետարիատի գոյացման առաջին շրջանը հատուկ է յեղել նաև նրանով, վոր այդ շրջանում խմբակային շահերը զերպատվել են ընդհանուր դասակարգային շահերին: Էնդհանուր դասակարգային շահերի և դրանց համար մղվող պայքարի մասին պրոլետարիատը գենևա հասկացողություն չի ունեցել Դեռ ավելին, Այդ շրջանում, իրենց գոյության բարեկարգման համար մղվող պայքարի ընթացքում, բանվորական առանձին ընմբակցությունները (համբարությունները) շատ անդամ հակադրվել են մեկը մյուսին և դրանով միասել են իրենց ընդհանուր դասակարգային պայքարի կազմակերպվածությանն ու առաջդրված հարցերի զրական լուծամանը: Այս ամենն, անջուշ, բուրժուազիային ձեռնաու յեր, և նա ամեն կերպ աշխատել է բանվոր դասակարգի անկազմակերպվածությունն ու գիտակցության ցածր մակարդակն ոգտագործել իր սեփական իշխանության ամրացման համար: «Բաժանի, վոր

Ֆիբս»: Իմպերիալիստական այս լոգունըը լիուլի ոգտագործվել ե նրա կողմից: Կրկնում ենք, այս ամենը վերաբերում է պրոլետարիատի գոյացման առաջին շրջանին, այն շրջանին, յերբ ինդուստրիալ արդյունաբերությունը նոր հր զարգանում, յերբ քաղաքի այսորվա պրոլետարիատը նոր եր ստեղծվում:

Բանվոր դասակարգի գոյացման շրջանը իր հիմնականում արդեն հակադիր և առաջինին: Պրոլետարիատը վորպես «դասակարգի ինքն իր համար», բացասելով իր զարգացման առաջին շրջանի հիմնական հատկանիշները: Համբարային առանձին շահերի առաջադրման, խմբակային անկազմակերպ պայքարի փոխարեն, յերկըորդ շըրջանում մենք արգեն գործ ունենք պրոլետարական միասնական կամքի դրսերման և կազմակերպված պայքարի հետ: Սակայն, դրանով պրոլետարիատի առանձին խավերի ներքին համբարային հակամարտությունն իսպառ չի վերանում: Կազմակերպված միասնական դասակարգի մեջ դեռևս շարունակում է գոյություն ունենալ ներքին խմբակային շահը և այդ շահը (վորը յենում է բանվորական մասսաների անտեսական անհավասարությունից) հանախ հակադրվում է պրոլետարիատի ընդհանուր շահերին ու դրանով իսկ արդեն հանդիսանում այն միջոցը, վորի ոգնությամբ բուրժուական ու մանը-բուրժուական տարրերն աշխատում են իրենց աղջեցությունը գոյություն բարեկարգման համար մղվող պայքարի մեջ կազմակերպված ներքին մյուս մանը-բուրժուական ելեմենտների հետ միասին ճգնում ելին աղջացուցել, վոր 1914 թ. իմպերիալիստական պատերազմը, այդ մարդկության և քաղաքակրթության հետագա բարգավաճման համար մղվող մի պայքար եւ:

Բացի այդ, բանվոր դասակարգի մատնանշած անհամասեռության հետևանքով նրա վրա ներգործող ուսար աղջեցությունների ուժեղացման և շարժման ղեկավարության ու տոն տալուն մեծապես նպաստել ե և այն, վոր պրոլետարիատի դասակարգային կովի ընթացքում նրան են միացել և բուրժուական ու մանը-բուրժուական տարրերը, վորոնք նրա հետ կարող ելին գնալ այնքան ժամանակ, քանի գեռ դասակարգային հակամարտու-

թյունը մեր որերի սուր բնույթը չեր ստացել Յեկ միթե մյոււ
դասակարգերի պատմությունից նման որինակներ քիչ կան:

Հայտնի յե, որինակ, ֆրանսիական հեղափոխության ըլջաւ
նում բուրժուազիայի հետ գործակցում եյին հակառավատական բու
րր տարրեցը: Բայց յերբ հեղափոխությունն արդեն իրողություն
եր դառել, տարրեր շահեր ունեցող տարրերն սկսեցին մեկը մյոււ
սին հակառագիլ և մեկը մյոււսի դեմ դինված պայքար մղել: Յա-
կորինների, ժիրոնդիստների ու սահմանադրական միապետական-
ների միջն տեղի ունեցած ամրող կոիվը դրա լավագույն ապա-
ցույցն եւ հարկի պրոլետարական հեղափոխական շարժումն իր
հիմնականում բուրժուական շարժմանը հակառագիլ մի շարժում եւ,
այդ մի գասակարգի պայքար եւ, վորն ուղղված եւ առհասարակ
գասակարգերի և գասակարգային հասարակությունների դեմ:
Բայց վոչ վոք չի կարող բացասել այն հանգատանքը, վոր հասա-
րակական վորոշ խմբակցություններ այստեղ ել կարող են վորոշ
ըլջաններում միանալ պրոլետարիատի պայքարին: Այդպես եր,
որինակ, Ստրուվեյի և Ընկ. կապը Ռ.Ս.Դ.Բ.Կ. հետ, Այնքան ժա-
մանակ, քանի դեռ կոփմն ուղղված եր ընդհանուր թշնամու՝ ցա-
րիզմի դեմ և այդ կովում բուրժուազիան կորցնելու փոխա-
րեն շահում եր, նրա գաղափարախոսները դաշնակցում եյին պրո-
լետարիատի հետ: Բայց հենց վոր իրերի հարաբերությունը
փոխվեց, նրանք ել փոխեցին իրենց վերաբերմունքը Ռ.Ս.Դ.Բ.Կ
հանգեց և բոլոր կապերը կտրելով պրոլետարիատի կուսակցու-
թյունից՝ իրենց սեփական կուսակցությունը հիմնեցին և սկսեցին
ուժեղ պայքար բանվոր գասակարգի դեմ:

Սակայն զըանով հարցը չսպառվեց: Ռ.Ս.Դ.Բ.Կ. շարքերում
մնացին տարրեր ևս, վորոնք յենթարկվելով պրոլետարիատի գո-
յացման յերկրորդ շրջանում գենես գոյություն ունեցող խմբակա-
յին շահերին, աստիճանաբար վերասերվեցին և այժմ արդեն հան-
դես են դալիս վորպես բուրժուազիայի ձախ թեկի կուսակցու-
թյուն: Ռուսաստանում, ուր բուրժուազիան համեմատարար թույլ
եր, այդ վերասերվող շերտի ազդեցությունն այնքան մեծ չի յե-
ղել: Յեկուալայում ընդհակառակը: Անզիւայում, Գերմանիայում,
Ֆրանսիայում և այլ յերկրներում Ռ.Դ. վերասերվող շերտի, ինչ-
պես և ժամանակի ընթացքում պրոլետարիատի պայքարին միա-
ցած ոտար տարրերի (բուրժուական և մանր-բուրժուական) ուժեղ
ձնշման հետևանքով դեռ այսոր ել բուրժուազիայի այդ ձախ թեկի

կուսակցության (ս. գ.) աղբեցությունը բանվորական մասսա-
ների վրա բավականաչափ ուժեղ եւ: Յեկի նրանք՝ ս. գ.՝ ներն
այսոր բանվոր դասակարգի պայքարի հետ հեռավոր առնչու-
թյուն ունեցող վորոշ ճշմարտություններ են ասում, այլ պիտի
ե բացատրել նրանով, վոր նրանք ևս իրենց հերթին յենթարկվում
են ժամանակավորապես իրենց հետեւից գնացող բանվորական
մասսաների ճնշմանը: Պրոլետարական զանգվածները, յենթարկ-
ելով բուրժուական աղեցություններին, այնուամենայնիվ ի-
րենց գասակարգային ուժեղ բնազդի ոգնությամբ կարողանում
են ժամանակ առ ժամանակ իրենց կամքը ևս զգացնել տալով
դեկավար շերտին, հարկադրել վերջիններին հաշվի առնել իրենց
պահանջները: Անշուշտ, այստեղ խոչը դեր եւ խաղում և բուր-
ժուազիայի դասակարգային սուբյեկտիվիզմից յելնող այն դիտա-
վորությունը, վոր նա փորձում եւ վորոշ զիջումների գնով աշխա-
տավորին խարեւ, բայց ներկա զեղքում մեր կարծիքով հիմնա-
կանը հիշատակած փոխարաբերությունն եւ, գոյություն ունե-
ցող փոխադարձ ճնշումը: Այդ փոխազդեցության և փոխադարձ
ճնշման հետևանքով հայկական մենշևիզմի այսոր իր հականեղա-
փօխական տեսակետները զարդարում եւ մարքսիստի փետուրնե-
րով: Բայց միաժամանակ չկարողանալով կոծկել մերկ իրականու-
թյունը, փորձում եւ հավատացնել ընթերցողին, վոր «յուր բոլոր
բացասական կողմերով հայկական (կարդա դաշնակցական չ.)
շարժումը վերջիւրջո» յեղել և «զրական»: (Յ. Խանզադյան,
«Ա. Զնարոնյան», էջ 31), վոր «գովելի յե այն ճիգն ու մարտը
(դաշնակցության կազմակերպած ավանդուրաները. — չ.), վոր
մզմակ և հանուն տաճկահայ ժողովրդի քաղաքական իրավունք-
ների... (Յ. Ավդալիկյան, «Ա. Թոխմախյան», էջ 24), վոր Դաշ-
նակցության հականեղափօխական գործունեյությունը թերի յե
միմիայն նրանով, վոր քիչ «պղտոր եր և տարերային, ինչպես
պղտոր եր Աղատ Հայտստանի գաղափարը» («Անարոնյան», էջ 3):
Այլ կերպ ասած, Դաշնակցությանը նրանք դատապարտում են վոչ
թե նրա համար, վոր նա հականեղափօխական ե յեղել, այլ նրա
համար, վոր իր հականեղափօխության մեջ օհետեւղական» չի յե-
ղել: Դաշնակցական «շարժումները պետք ե համարել զրական»,
անգամ «գովելի», հետևաբար Դաշնակցությունը վեղել ե հեղա-
փօխական կուսակցություն, նա պայքարել ե և պայքարում ե
հանուն բանվոր աշխատավոր մասսաների շահկրիդեցել հաշնակ-

ցությունը: Ահա հայ մենչկեկների մարքսիզմը, ահա այն, ինչ վոր նրանք այսոր ցանկանում են ուսուցանել մեր մասսաներին:

Դաշնակցության սոցիալական ճիշտ արժեքագործան, նրա գործունեյության գնահատության հարցերը նոր չե, վոր վիճակ բանության տեղի յեն տվել և նոր չե, վոր բոլցերկները հանձինս Ա. Շահումյանի պայքարել են բոլոր նրանց դեմ, ովքեր փորձեր են արել այն վրակել վրափես մանր-բուրժուական, կամ հեղափոխական կուսակցություն:

Դաշնակցությունը, վորպես կուսակցություն, հանդեռ և յեկել 1891 թվին: Կուսակցության պաշտոնական որդանի «Դրոշակի» առաջին համարում զետեղված գեկլարացիայի մեջ ասված ե, վոր «դաշնակցության գործունեյությունը հիմնված է տաճկահյերի այն գիտակցության վրա, վոր այլևս անկարելի յե տառնել այսպիսի ամոթալի վիճակ և սարսափելի դրություն: Համեմատաբար թեև թույլ վիճակում, բայց արդեն գոյություն ունեցող հայ առետրական բուրժուազիայի շահերի արձագանքն եր այդ: Հնդկաստանի, Պուրի և Անդրկովկասի վաճառականները հայ շուկայի և իրենց կապիտալի ազատ շրջանառության համար հնարավորություններ ստեղծելու մասին վագուց եյին ծրագրերը Դաշնակցությունը 1891 թ. իր գեկլարացիայի միայն այդ վաղուց ի վեր մտորվող ծրագիրն եր, վոր նորից հրապարակի վրա գրեց և հայտրաբեց այն մասին, վոր նվիրվելու յե դրա իրաւուժմանը: Այսպիսով Դաշնակցությունը հենց սկզբեց հանդեռ և գալիս փորձես հայ բուրժուազիայի մարտական կազմվերպությունը: Բայց միաժամանակ սխալ կլիներ չտեսնել և այն մանր-բուրժուազիան ազդեցությունները, վոր կըել ենա իր գործունեյության սկզբանական շրջանում: Այդ ազդեցությունները պետք է բացառել մի շարք պատճառներով: Հայտնի յե, վոր Դաշնակցությունը, առաջ գալով Անդրկովկասի գերազանցապես մանր-բուրժուազիան միջավայրում, (մասնավորապես Հայտառանում), չեր կարող վորոնք գոյություն ունեցին մեզանում 1890—1900-ական թվականներին (գյուղացիական ապատամբություններ գրաստանում, Լոռում): Մի այլ հանդամանք. միթե գաղտնիք ե, վոր 90-ական թվականներին թեև հայ բուրժուազիան փորձարգ ինքն իր համար արդեն գլուխուն ուներ, բայց և այնպես նա գեռ այնքան մեծ ուժությունում, վոր կամ

իրենից, վոր կարողանար իր հետեւ գնացող մանր-բուրժուական տարբերին ամբողջովին իրեն յենթարկել և դրանով լիովին ապահովել իր սեփական կուսակցության ամեն տեսակի ազգեցություններից: Իսկ 1900-ական թվականների առաջին տարիներին, մասնավորապես 1905 թ. արդեն մենք այլս այդ դրությունը չունենք: Հայ բուրժուազիան Անդրկովկասում խոշոր ուժ և գառնում: Բազվի, վոր Անդրկովկասի արդյունաբերական կենարուն ե, 1905 թ. հարստության 42,5 տոկոսը և ամբողջ նահանգի առևերի 25 տոկոսը հայ կապիտալիստներին եր պատկանում: 1900-1905 թվականներին ինդուստրիալ արդյունաբերության համեմատաբար արագ զարգացումն, աստիճանաբար հետին պլանի վրա յե նետում մանր-բուրժուական տնտեսություններին և նրանց իր շրջապույտի մեջ առնելով, սկսում ե արօրել: Այս ամենն անպայման պիտի օւժեղացներ հայ խոշոր բուրժուազիայի գերիշխանությունը: Այդ պատճառով ել Դաշնակցությունը, վորը սինչև 1900-ական թվականների առաջին տարիները գերազանցապես զբաղված եր Տաճկահայաստանի, այլ կերպ ասած՝ հայ առեւտրական բուրժուազիայի համար նոր շուկաներ ձևոք բնելելու խնդրով, սկսում ե Անդրկովկասի հարցերով ևս զբաղվել և հայ արդյունաբերական բուրժուազիայի շահերն ևս իր պաշտպանության ներքո վերցնել: Հայտնի յե, վոր Դաշնակցությունը 1905 թ. հեղափոխության շրջանում հայ նավթատերերի և արդյունաբերողների հավատարիմ արթուն պահակն եր և գործադրությալոր, հեղափոխական բանվորների գնդակահարուղը: Հիշենք թեկուզ Դաշնակցության ձեռքով կազմակերպված՝ Սարգիս Քալաշյանի և ընկերների սպանությունը և կամ թե յուր ժամանակ հայտնի դարձած «կանաչ խմբի» հականեղափոխական մյուս արարքները: Այսպիսով, ուրեմն, 1905 թ. հայ խոշոր բուրժուազիայի մարտական կազմակերպության, Դաշնակցության զարգացման այն շրջանն ե, յերբ նա վերջնականորեն ձևավորվելով գործական ինքնուրույն ուժ, մասնակցում ե հեղափոխությանը ծառանալով նրա դեմ: Դրանով արդեն ցայտուն կերպով գրաւորելով իր առանց այն ել հականեղափոխական գեմքը: Բայց իրավացիորեն այժմ կարող են հարց տալ. չե վոր 1905 թ. և դրանից հետո յեր, վոր Դաշնակցությունն իր ծրագրի մեջ սոցիալիստական վորոշ ֆրազներ մացրեց: Այդ ճիշտ ե, բայց այդ բնակ չի հակասում մեր ասածներին: Հայ խոշոր բուր-

Ժուազիան այդ շրջանում արդեն այնքան ուժեղ եր, վոր առանց վախենալու, մասսաներին խարելու համար, աղատ կերպով կարող եր եսերներից սոցիալիստական մի շարք ֆրազներ փոխ վերցնել: Յեկ միթե նույնը չեն անում բուրժուական շատ կուտակցություններ հենց այսոր: Յեթե հայկական մենչեւզմը գեռ այսոր ել համար կերպով շարունակում և պաշտպանել Դաշնակցությանը, այդ մի ավելորդ անգամ ևս ցույց ե տալիս նրանց յեղայրական սերտ կապը: Թող Խանդադյանը և Ավդալբեգյանը փորձեն այդ բացասել, դրանով վոչինչ չի փոխվի, քանի վոր փառտերն անհամեատ ավելի ուժեղ են, քան դատարկ ֆրազները:

ՀՈԴՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

Յերեւոյթների մոնիստական բացարությունը մարքսյան գնոսեոլոգիայի հիմնական պրինցիպն եւ Այդ իսկ պատճառով զարմանալի չեն բնավ, վոր Մարքսի բոլոր քննադատներն ել դրանից են սկսում մարքսիզմի ռեվիդիան: Պրոլետարական գործի ռենեգատաները շատ լավ են դիտակցում, վոր լինել ողթողոքս մարքսիստ, բայց միաժամանակ սպասարկել բուրժուազիյին՝ թե տեսակոն և թե գործնական տեսակետից՝ միանդամայն անհնար բան եւ Հայատարիմ իրենց կոչման, բանվոր դասակարգի այդ յերդվյալ թշնամիներն աշխատում են աղճատել պրոլետարիատի հեղափոխական ուսմունքը, իդեալիս զինաթափ անել նրան իր թշնամու տուաջ, վորպեսզի կարողանան շարունակել իրենց ու ու մութ գործը: Այդ կերպ վարվեցին հերնշտայնը գերմանիայում, Ստրուվին, Բողդանովը և մյուսները Ռուսաստանում, այդ ճանապարհն ե բոնել նաև մարքսիզմի հայ քննադատ թ. Ավդալբեգյանը մեղանում: Ինչ խոսք, Ավդալբեգյանը յերկշու ե, նա տիպիկ նայիրցի յեւ և այնքան ճամարձակություն չունի մարքսիզմը բուրժուական մի այլ իզմի կցելու, բայց և այնպես նրա այսորվա կատարած գործը մեղանում շարունակությունն ե այն բանի, ինչ վոր յուր ժամանակին կատարել են պրոլետարիատի հեղափոխական ուսմունքի շատ ու շատ ուրիշ քննադատները: Այդ քննադատաների առաջնակարգ խնդիրն ե յեղել՝ ճեղքվածք առաջացնելով մարքսիզմի մեջ, բանվոր դասակարգին դատիքարակել բուրժուատ-նացիոնալիստական վոգով և այդ կերպ հետ կասեցնել նրան: հեղափոխական ընդդումներից: Ավդալբեգյանի նպատակն ել՝ մեր բանվորական մասսաներին մանր-բուրժուա-

կան կեղծիք ուսուցանելու ճանապարհով հայ բուրժուազիա յին սպասարկելու եւ կա վորեւ տարբերություն այս յերկուսի միջև: Բնավ, յերբեք:

Բերնշտայնը յուր ժամանակին մարդկության անցած տընտեսական կյանքի պարբերացման համար հիմք ընդունեց արտադրության կազմակերպումն ու փոխանակությունը: Մարքսյան միասնության գաղափարը խախտելու, մարքսիզմի ազճատելու պրիորիներից մենքն եր այդ: Հետագայում Բերնշտայնը, ալիքի խուբանակով իր պատարա մեջ, փաստորեն հանգեց մարքսիզմի բացամանը և դարձավ բուրժուատ-ֆիլիստերներից մեկը: Ավդալբեգյանը քիչ «ինելացի» կերպով և կատարում մարքսիզմի իր ռեվեղիան: Նա ցանկանում է մարքսյան միասնության գաղափարին «հավատարիմ» մնալ, բայց միաժամանակ հավատարիմ կերպով ել կատարել իր ստանձնած միսիան:

Արտադրական հարաբերություններն են տնտեսական ֆորմացիաների պարբերացման հիմքը, ասում է Ավդալբեգյանը: Յեկայն և պատճառը, վոր առաջին հայացքից վոմանց թվում ե, թե Ավդալբեգյանի և Յերնշտայնի միջև, գոնե այս դեպքում, ինչ-վոր խորխորատ կա, առաջինը մոնիստ ե, մինչդեռ վերջինը հարյուր տոկոսային եկեղեկտիկ: Բայց այդ միայն առաջին հայացքից, վորպինետեւ, ներկա դեպքում, եյականը հարցի լուծման համար գործադրվող պրիորը չե, այլ-այն հետևանքը, վորին հանգում են նրանք:

Ֆիխտեն գիտակցության առաջնությունն ապացուցելու համար սկսեց սուրբյեկտից, Հեղելը, ընդհակառակը՝ աբսոլյուտ վոգուց, վորը նրա մոտ ներկայանում եր վորպես որյեկտ: Բայց ինչ տարբերություն այդ յերկուսի միջև: «Միակ զանազանությունն» այն ե, վոր յերկուսն ել տարբեր ճանապարհներով, տարբեր վարիանտներով ի վերջո հոգու առաջնությանը հանդան: Ավդալբեգյանը, իհարկե, վոչ Հեղել ե, վոչ ել Ֆիխտե, ինչպես և Յերնշտայնը: Գերմանացի այդ յերկու հանճարները մարդկային մաքի առաջադիմության համար շատ և շատ խոշոր գործ են կատարել: Իսկ ինչ են արել մարքսիզմի այդ քննադատները: Վոչինչ: Նրանց արած գործը յեղել ե ուեկցիցին, մարդկային մաքի պրոդրեսի համար՝ միանդամայն անպիտան: Միակ նմանությունն այն ե, վոր վերջիններն ել տուաջինների նման, վերջին հաշվով, միևնույն նպատակին են ծառայում: Տարբեր և զարտուղի

ճանապարհներով Ավդալբեգյանն ել այսոր մարքսիզմի ռեվիվիտացականի և զբաղվում: Մենք այդ տեսանք դեռ քաղաքատնտեսության ըմբռնման մասին «Նրա ունեցած տեսակետը» քննության առնելիս. դժվար չե այդ ապացուցել և այս անդամ, մանավանդ, վոր միասնության գաղափարի ըմբռնումը Մարքսի քննադատներ, ի ամենաթույլ կողմն եւ:

ՄԱՐՔՍԱՆ ՄՈՆԻՉԱԾՄ, ԹԵ ԱՎԴԱՅԻՑԳՅԱՆԱԿԱՆ
ՇԱՂԱԿՐԱՏՈՒԹՅՈՒՆ

Մինչև Մարքսը մեր տնտեսական կյանքի շրջանայացման համար բազմաթիվ յեղանակներ են առաջարկվել, բայց դրանցից և վոչ մեկն ել հարցին գիտական լուծում չի տվել:

Գիրմանական բութուազիայի ականավոր տնտեսագետները պարբերացման հիմունք և ընդունել տնտեսության ծավալը, Ֆ. Լիստը՝ զբաղմունքը, «մարքսիստներից» եւ, Բերնաշտայնը՝ արտադրության կազմակերպումն ու փոփոխությունը, Վանդերվելդեն՝ փոխանակություն, արտադրության կազմակերպումն ու ծավալը և այլն: Այս բոլորի մասին գիտե և հիշատակություններ և անում նաև Ավդալբեգյանը, բայց դրանից անհրաժեշտ հետեւություններ անել չի կարող:

Մինչու հետմարքսյան շրջանի բոլոր տիպի բութուատնտեսագետների հիմնական սիստեմ յեղել և այն, վոր նրանք պարբերացման ժամանակ փոխանակ հիմնականից յելնելու, յելակետ են ընդունել տնտեսական այնպիսի յերկույթներ, վորոնք իրենց հերթին հիմնավորման կարիք են զգում: Բացի այդ, նրանք յեղել են եկեկաթիկներ, վոչ մոնիստներ: Ավդալբեգյանը, ինչպես ասացինք, ցանկանում է լինել միասնության գաղափարի ջատագով, նա նույնիսկ փորձ եւ անում կիրառել այդ, բայց անհաջող:

«Ծնտեսական զարգացման պարբերացման ժամանակ պետք է անշեղ կիրառել բաժանման մեկ հիմունք միայն»: Բարի: Բայց վորը և լինելու այդ հիմունքը. «արտադրական հարաբերությունները», ասում ե Ավդալբեգյանը: Արտադրական հարաբերությունների «արմատական փոփոխությամբ մեզ ներկայանում ե մի նոր փորմացիա»: Հենց դրա համար ել այդ ե հիմնականը: Յերբ մեզ տրված են արտադրողական ուժերն ու արտադրական հարաբերությունները, «մենք պետք ե ընտրություն կատարենք» դրանց «մեջ» և վորպես միակ հիմնական բնորոշիչը՝ ընդունենք արտա-

դրական հարաբերությունները, ասում ե Ավդալբեգյանը: Ճիշտ է արդյոք այս:

Մարքսը հավատարիմ մնալով միասնության գաղափարին, տնտեսական զարգացման պարբերացման ժամանակ, արտադրուական ուժերն ու արտադրական հարաբերությունները միմյանցից չի անջատել: Անա թե ինչ ե գրել Մարքսն այդ մասին. «տնտեսական շրջանները տարբերվում են միմյանցից վոչ թե նրանով, թե ինչ են արտադրում, այլ նրանով, թե ինչպես և աշխատանքի միջնություր կոչ միայն մարդկային բանվորական ուժի զարգացման չափանիկ էն, այլ և ցուցանիւ նասարակականայն հարաբերությունների, վորոնց ներկայաւրիմ տեղի լե ունենում այդ աշխատանքը» (Ընդդժումը մերն ե. — Հ.) («Կապիտալ», 1-ին հատոր, եջ 151):

Աշխատանքի միջոցները և մարդկային բանվորական ուժի զարգացման, և հասարակական հարաբերությունների չափանիշն

Մեր կարծիքով, սա ասված ե բավական պարզ ու հասկանալի լեզվով: Ավդալբեգյանը դրա հետ համաձայն չե: Նրա մոտ միասնության գաղափարն այն աստիճան ե աղավաղվում, վոր մարքսիզմը վեր և ածկում մի սովորական բութուական տեսության:

Պիետանովը յուր ժամանակին ծաղրել ե այդ կարգի տեսարաններից մեկին՝ Ալֆրեդ Եսպինանսին նրա համար, վոր նա միակողմանի յե մոտեցել միասնության խնդրի վորոշմանը, չըմբռնելով մատերիալիստական աշխարհայեցողության հիմնական սկզբունքները: Անշուշտ Ավդալբեգյանն Ալֆրեդ Եսպինանսի տաղանդը չունի, բայց նա այն առավելիությունն ունի, վոր հարցի լուծման իր յեղանակի տրամարանական զարգացմանը ավելի հեռու յե գնում, քան իր բոլոր կարգի բարեկամները:

Ճիշտ ե, արտադրողական ուժերը պայմանավորողն են, բայց հասարակությունների պարբերացման համար հիմնականը արտադրական հարաբերություններն են, ասում ե Ավդալբեգյանը:

Կասկածից վեր ե, վոր «իրն ինքնին» մեր գիտակցությունից անկախ գոյություն ունի, բայց ամբողջ հարցը նրա մեջ ե, վոր այդ «իրն ինքնին» մեզ անմատչելի յե: Այսպիսով վերջին հաշվով սուրբեկան ե, վոր պայմանավորում ե որյեկտը, գիտակցությունն ե առաջնակարգ, ըստ Կանտի:

Կա արդյոք վորնե յերաշխիք, վոր Ավդալբեգյանն ել ի վերջուն

իրեալիզմին չի հանգելու։ Չե, չկա, վորովհետև նա մասամբ արդեն հանդել եւ։ Մենք այդ տեսանք դեռ նախորդ հողվածում, յերբ քննության եյբն առնում արժեքի, աղրանքի, ռենտայի, քաղաքատնտեսական և այլ կատեգորիաների ըմբռնման հարցերը, վորոնք ըստ Ավդալբեզյանի վերպատմական, տրամաբանական կատեգորիաներ են։ Բուզգլուական չե՛ արդյոք այդ։ Անկամկած բուրժուադիան եւ, վոր իր դասակարգային տիրապետության անմահությունն ապացուցելու համար ձգտում եւ ապրանքային-կապիտալիստական հասարակության տնտեսական որենքները վերտրամարանականի վերածել։ Նույն պաշտոնը չի կատարում արդյոք Ավդալբեզյանը և այս անգամ, յերբ արտադրողական ուժերն ու արտադրական հարաբերություններն անջատում եւ միայնցից։

Արտադրական հարաբերությունները գոյսւթյուն ունեն արտադրողական ուժերի վրաց շարժման, շփման փոխադրեցության և փոխհարաբերության միջոցով։ Արտադրողական ուժերն եւ իրենց հերթին չեն անջատվում արտադրական հարաբերություններից։ Այն, ինչ արտադրողական ուժ եւ, արտադրական հարաբերության մեջ եւ, և այն, ինչ առաջացնում եւ և կամ թե անհրաժեշտ պայմանների գոյսւթյան դեպքում շանսեր ունի արտադրական հարաբերությունների առաջացման նախապայման հանդիսանալ, այդ արտադրողական ուժ։ Որինակ, Յուպիտերն այսոր, մեզ համար, արտադրողական ուժ չե, վորովհետև վերօնիշյալ պահանջներից և վոչ մեկին բավարարել չի կարող։ Սակայն Լենինականի տեքստի գործարանն արտադրողական ուժ եւ։

Ենդելսը, խոսք բաց անելով հասարակության հիմքի և մասնավորապես արտադրողական ուժերի, արտադրական հարաբերությունների կալվակցության մասին, 1894 թ. հունվարի 25-ի թվակիր նամակում, ուղղված Շտարկենրություն, գրում եւ. «Տնտեսական հարաբերությունների տակ, վորոնց մենք հասարակության պատության պայմանագործ հիմունք ենք համարում, հասկանում ենք այն յեղանակը (Art und Weise), վորով վորոշ հասարակության մարդիկ արտադրում են այն ամենը, ինչ անհրաժեշտ երենց կյանքի պահպանման համար և ինչպես նրանք այդ արտադրածը փոխանակում են (ինչ չափով աշխատանքի բաժնում գոյություն ունի)։ Այսպիսով, այստեղ մտնում են տրանսպորտի և արտադրության ամբողջ տեխնիկան (ընդգծումը հեղինակինն եւ), «Տնտեսական հարաբերության մեջ մտնում եւ աշխարհա-

բրական հիմքը» . . (Պисьма Է. Մ. և Փ. Թ., стр. 314): Այս ամենից հետո կասկած կմ այլևս այն մասին, վոր ենդելսի համար միանգամայն պարզը եւ յեղել այն ճշմարտությունը, վոր յերբ խոսքը հասարակության և ընդհանրապես հիմքի մասին եւ, մենք արտադրողական ուժերը և արտադրական հարաբերությունները բաժան-բաժան ընդունել չենք կարող։ Սակայն, դրանով ենդելսը, և վոչ եւ մի այլ մարդուստ, յերբեք չեն առարկել այն իրությունն ապացուցելու համար ձգտում եւ ապրանքային-կապիտալիստական հասարակության ուժերը պատճառ են, իսկ արտադրողական հարաբերությունները՝ հետևանք։

Խոսք բաց անելով կացության և գիտակցության միասնության մասին, Ենդելսը, Լենինը, Պիտիանովը և ուրիշ մարքսիստներ առարկել են Բյուլիներին, Մոլեցոտաթին և բուրժուաց մյուս գիտականներին, ծաղրելով նրանց մատերիալիզմը հենց նրա համար, վոր նրանք հարցին սիակողմանի յեն մոտեցել և զոգին բաժանելով մատերիալիզմ՝ փաստորեն բացասել են յերկույթների մարքսյան մոնիստական ըմբռնումը։ Նույնը և այս գեպքում Ենդելսը արտադրողական ուժերն ու արտադրական հարաբերությունները գիտելով իրենց պատճառի և հետևանքի կապակցության մեջ, բնավ չի բացասել նրանց միասնական լինելը։ Աժ-Բողջ լանդիրն եւ հենց նրանումն եւ, վոր միակոնության այդ յերկու բաղադրիչ մասերի մեկը մյուսի ղատճառ և հետևանք լինելու փաստի ուսումնամիջությունը վոչ թե բացասում, ընդհակառակը հաստատում ենրանց միասնական լինելու հանգամանքը։ Մարքսիստական այս ճշմարտությունն եւ ահա, վոր Ավդալբեզյանը չի ըմբռնել։

«Բուրժուազիան չի կարող գոյություն ունենալ առանց անդադար հեղաշրջելու արդյունագործության միջոցները, ուրեմն և արդյունաբերական հարաբերությունները» («Կոմ. մանիք.», եջ 25, հրատ. 1906 թ.): Ահա Մարքս-Ենդելսի խոկական տեսակետը։

Բուրժուազիան վորպեսզի կարողանա հեղաշրջել արտադրական հարաբերությունները և դրա հետ միասին բովանդակ հասարակական հարաբերությունները, սկսում եւ արդյունագործության միջոցներից, արդյունագործության միջոցների հեղաշրջումն եւ, վոր հասրավորություն և տալիս նրան կապիտալիստական արտադրական հարաբերությունները հաստատել։ Վերջինները «վոչ միայն բանվորական ուժի չափանիշ են», այլ և «հասարակական հարաբերությունների ցուցանիշ»։

Արտադրողական ուժերը պայմանավորող հիմք են, արտադրական հարաբերությունները գրանցից անբաժան, բայց գրանցով պայմանավորվող Յեվ գործինեակ նրանք անբաժան են և յերկուսը միասին կազմում են հասարակությունների յելման կետը, այդ իսկ պատճառով ել նրանք միասին են կազմում այն հիմունքը, վորից պիտի յելնի ամեն մի ուսումնասիրող: Մարքսին այդպիսի բարոնել նաև Պիեխանովը (տես Ըօվ., թ. VII, էտր. 163—70): Իսկ թե ինչի հիման վրա յե Ավդալբեգյանը հակառակը պնդում, այդ այնքան ել պարզ չե: Նա ասում է. «Արտադրողական ուժերի զարգացումը պատճառ է հանրային արտադրական ֆորմացիայի առաջ դարձն, զարգացման ու անկման, սակայն այս ֆորմացիայի եյությունը կազմում են մարդկանց արտադրության պրոցեսում ունեցած հարաբերությունների փոփոխությունները»:

Բայց ներողություն. չե՞ վոր հարցն այդ կերպ դնելով՝ մենք արտադրողական ուժերն, ու արտադրական հարաբերություններն անջատում ենք միմյանցից, վորն, ինչպես տեսանք, (կտեսնենք և հետագայում), մարդուկանի հետ վորեն տանչությունի: Յերկրորդ. ով տասց, վոր մենք վորեն ֆորմացիայի բովանդակությունը պիտի փնտենք միայն և միայն արտադրական հարաբերությունների մեջ: Տնտեսական ամեն մի շրջանի բովանդակությունը արտահայտվում է նաև նրա արտադրողական ուժերի զարգացման մեջ: Չե վոր արտադրական հարաբերություններն այդ ուժերի զարգացման արտադրության ձևերն են և վոյ թե տվյալ ֆորմացիայի վող նի նամակում, խոսք բաց անելով մարդկանց միջև յեղած հարաբերյել հարաբերությունների մասին, դրում է. «Այդ մատերյել մեջ իրականանում ենրանց մատերյել ինդիվիդուալ գործությունը»: Այդ պատճառով ել արտադրողական ուժերն ու արտադրական հարաբերությունները մի միասնական ամբողջություն լրացնում են միմյանց և միասին կազմում հասարակության տնտեսական հիմքը:

Բայց մի բոպե ընդունենք, վոր Ավդալբեգյանը ճիշտ է. յելման կետը ընդունենք արտադրական հարաբերությունները, Արդյոք այդ չե՞ լինի այն, յեթե մենք խոսք բաց անելով

արտադրության մասին, ասենք՝ արտադրությունը պատճառ է սպառումը՝ հետեւանք: Սակայն Մարքսը միանդամայն այլ կարծիք ունի այդ մասին: Նա գտնում է, վոր «սպառումը անմիջապես արտադրություն է, ճիշտ այնպես, ինչպես բնության մեջ քիմիական ելեմենտների սպառումը միաժամանակ բույսերի արտադրություն է» (Կ քրտ. ուլիտ. էկ. էտր. 15): Արտադրական հարաբերություններն ել արտադրողական ուժերի զարգացման վորոշ աստիճանի արտահայտության ձևերն են ճիշտ այնպես, ինչպես սպառումը՝ արտադրության մի մոմենտը: Ասել, թե արտադրական հարաբերությունների փոփոխությունը դիտել բավ է, վորպեսզի կարողանանք տարրերել տնտեսական ֆորմացիաները միմյանցից, նշանակում է ճշմարտության գեն մեղանչելով գնալ բուրժուական մողաների հետևից:

Ավդալբեգյանը կարծում է.—ահա, մենք ունենք արտադրողական վորոշ ուժեր, սրանք զարգանում են, թե ի՞նչպես, այդ անհայտ եւ Բայց և այնպես նրանք ստեղծում են համապատասխան արտադրական հարաբերությունների: Այդ հարաբերությունները թեև պայմանավորված են, բայց հնարավոր և անջատել իրենց պայմանավորվից և ընդունել մեր ուսումնասիրությունների յելման կետը: Սրանց ավելի դեպակարգի, ինչպես և միտունության գաղափարի վուգաբացում լինել չեր կարող: Յեվ մեր կարծիքով ճիշտ են ասված Վուտկեցի խոսքերը նաև Ավդալբեգյանի վերաբերյալ—«Чтобы понять мир можно не ставить единства, но найдя единство, он потерял мир»:

Վորպեսզի կարողանար հասկանալ ու բացատրել հասարակությունները, Ավդալբեգյանը մի յելման կետ վնասուեց, բայց յերբ այդ կետը «գտավ», կորցրեց իր վոտի տակի ամրող հողը, Յեվ իրոք, ինչ և նշանակում հարցերն այդ աստիճանի պարզացնել, ինչ անմիջական հետեւանքի կարող ենք հանգել մենքը Որինակ, բուրժուական միշարք փելիսովաներ կացության ու գիտակցության հարաբերության հարցը վորոշելիս նմանապես բացացին միասնության գաղափարը: Ճիմք ընդունելով հոգին կամ գիտակցությունը և հարցերը չափազանց «պարզացնելով», նրանցից շատերը հետեւական կերպով զարգացնելով իրենց աեսակետը, սոլիցիպիզմին հանգեցին, այսինքն ծայրահեղ սուբյեկտիվիզմին:

Ավգալբեգյանը, անշուշտ, այդքան հետևողական լինել չի կարող, վորովնետև մանր բուրժուազիան ընդհանրապես հետևողական չեւ: Յեկ յեթե նա վորեե հետևողականություն ունի, այդ նրա անհետեղողականությունն եւ, հենց դրա համար ել նրա դրությունն անհամեմատ ավելի վորերգական եւ:

ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ «ՆՈՐ ԳՅՈՒԽ»-Ը ՅԵՎ ԿՌՄ ԹԵ
ԻՆՉՊԵՍ Ե ՆԱ ՀԱՅԿԱՑԵԼ ՄԱՐԲՍԻԶՄԸ

Սիալ լուծելով տնտեսական զարգացման պարբերացման հիմունքի հարցը, Ավգալբեգյանը կատարել ե նաև մի շարք այլ սիթաւններ: Առաջինը, ինչպես տեսանք, այդ հիմունքի հարցը վորոշելիս արտադրողական ուժեղն ու արտադրական հարաբերությունները միայնցից բաժանելն եւ: Յերկրորդը՝ արտադրական հարաբերություններից միայն գույքայինը հիմք ընդունելն եւ, վորը և մինչև վերջը չի կիրառել: Որինակ, ասիական տնտեսության մասին խոսելիս յելման կետ են ընդունվում միայն հողային հարաբերությունները. այնինչ Մարքսը, ինչպես և ըսլոր հետողական մարքսիստները, հիմնական «աշխատանքի գործիքներն» են համարում: Յեկ վերջապես, յերրորդն այն ե, վոր պարբերացման ժամանակ տնտեսական մի փորձացիք չի վերցրել մյոււների հետ դիմեկտիկական կապակցության մեջ, ինչպես և նկատի չի ունեցել ժամանակի ստեղծած կոնկրետ պայմանները և առանձնապես ընության ազգեցության փաստը, վորի մասին հատկապես խոսում ե Պլեխանովը. (Տօն. սով. թ. XVIII, էտր. 26): Ասածներս ապացուցելու համար քննենք թեկուզ Ավգալբեգյանի հայտնաբերած ասիական տնտեսական փորձացիքը հարցը:

Ավգալբեգյանն ասում ե, վոր իբր թե Մարքսն ասիական տնտեսությունն ընդունել ե վորպես առանձին ի՞նչնարար աընտեսական մի փորձացիք: Հարցը քննենք ավելի ՚ոտիկից՝ նրա իմկությունը պարզելու համար:

Ինչպես դիմեկտիկ, յուրաքանչյաւը տնտեսություն, վորպես դի տնտեսական մի ամերոջական փորձացիք անվանվի, նա պետք ե ունենա արտադրողական ուժեղի զարգացման մի այնպիսի աստիճան և գրան համապատասխան արտադրական հարաբերությունների մի այնպիսի համախմբում, վորն իր հիմնականում հակագիր լինի թե իր նախորդին և թե հետնորդին: Այդպիս ե ար-

դյոք ասիական տնտեսությունը: Բնուվ յերբեք: Ասիական տընտեսության արտադրողական ուժեղը դեռևս զարգացման այնպիսի ցածր աստիճանի վրա եյին գտնվում, վոր անհնար եյին դարձնում լայն չափով ուժեղից աշխատանքի շահագործումն, ինչպես և «իսկակատար» ինքնակա տնտեսությունների գոյությունը: Արտադրական հարաբերություններից այնտեղ կային թե նախնադարյան հասարակության մասցը ուղղվում եր նոր հասարակության սաղմերը: Հողն այստեղ դեռևս հանրությանն եր պատկանում: Հողից ստացած արդյունքը հավասար չափով բաշխվում եր համայնքի անդամների միջև, հետեւաբար, վորոշ չափով գոյություն ունեներ հանրային բաշխում: Բայց մի քիչ այլ դրություն եր արտադրության մյուս ճուղերում: Որինակ, արհեստաների մեջ կողեկտիվ աշխատանքը վորպես սիստեմ, գոյություն չուներ: Այդտեղ ամեն մի ընտանիք կարող եր, ինքնուրույն կերպով, այս կամ այն արհեստով զբաղվել: Արհեստավորը ծառայում եր ամբողջ գյուղի համար, նա հոգում եր իր գյուղի համայնքի կարեքները: Դրսի շուկայի համար նա չեր արտադրում: Վրա համար որյեկտիվ հնարավորություններ չկային: Արհեստավորը շուկայի ընդլայնումը սերտորեն կապված եր ավյալ համայնքի կարեքների բավարարման հնարավորությունների և պահանջների անման հետ: Թեև արտադրողական ուժեղի զարգացումն այս պարեղում նոր հասարակության սաղմերն ավելի եյին հասունացել, բայց և այնպիս տնտեսության այս ճյուղն ել դեռևս անրողութիւն զերծ չեր նախնադարյան կոմունիստական հասարակության մնացորդներից: Այդ բանում դուք ավելի համոզվեք, յեթե կարդաք Մարքսի այն տողերը, վորոնք նվիրված են այդ համայնքների ներսում կատարված աշխատանքների բաժանմանը:

Արհելյան Հնդկաստանի ամեն մի համայնք ուներ իր գարբենը, հյուսնը, ուսուցիչը և այլ հոգեոր պետեր (Կապիտալ, թ. 1, էտր. 336—37): Այդ պետերից մի մասն այլևս արտադրական աշխատանք չեր կատարում: Նրանք ապրում եյին համայնքի մյուս անդամների ստեղծած հավելյալ արդյունքով, վորը նշան եր արտադրողական ուժեղի վորոշ աստիճանի զարգացման, բայց վոչ այն աստիճանի, վոր կարողանար ամբողջովին փշրել հին հասարակության մնացորդները: Այս բանում, ինչպես Պլեխանովն և անում, Մարքսն ավելի համոզվեց, յեթե ծանոթացավ հին հասարակությունների մասին գիտության հայտնաբերած նոր տվյալ-

небрін: «Карапітапаї-ї апавдін հատորի հրատարակումից բավական անց Մարքսը Վ. Զասուլիչին ուղղած իր նամակում գրում է. „Там в Восточной Индии, оно (т.е. общество.— Г.) также встречается и всегда в форме последнего этапа архайической формации“ (Архив К. М. и Ф. Э. книга 1, стр. 272):

Ավդարեգյանին առանձնապես շփոթեցնում ե այն, վոր Մարքսը խոսելով ասիական տնտեսությունների դանդաղ առաջադիմության ժամանում. «Բաղաքական ամպրոպների փոթորիկները չեն շոշափում այս հասարակության տնտեսական հիմնական տարրերի կառուցվածքը» („Капитал“, т. 1, стр. 337):

Ավդարեգյանը սրանից այն յեզրակացությունն ե հանում, վոր դրանով Մարքսն իրեն թե վերջնականորեն փարատում ե ասիական տնտեսության տնտեսական ամբողջական ֆորմացիա ինեւու մասին յեղած ամեն մի կոսկած: Բայց իրականում Մարքսը դրանով հակառակն ե ապացուցել: Նա այդ ասելով՝ միայն այդ ժամանակվա տեխնիկայի և ընդհանրապես արագագորդական ուժերի չափազանց դանդաղ զարդանալու փաստն ե հիմնավորել, մասնավորապես աշխարհագրական առանձին պայմաններում, վորտեղ այդ հանդամանքն ալիքի սուր կերպով ե շեշտվել: Ասիական հասարակության որյնկանի հասարակությունները և սուրյեկտիվ կարողություններն այնքան քիչ եյին, վոր միանգամայն բնական ե դառնում այն, վոր դարեր շարունակ Ասիայում տնտեսության միենույն ձեր միալար կերպով անընդհատ կրկնվել ե: Մարքսն այդ հարցի լուծումը բավականաշափ հեշտացնում ե, յերբ նույն հշում գրում ե. «առտարքական մեխանիզմի պատճուրյանը (ընդգծումը մերն ե.—Հ.) այն ինքնարավ համայնքների, վորոնք շարունակ վերաբարդրվում են միենույն ձևով և կործանվելու դեպքում ծնունդ են առնում միենույն տեղում ու միենույն պնունագ, լուծում ե զաղոնիքն ասիական հասարակությունների...» Այդ արտադրական մեխանիզմի անչափ պարզությունը և դրա բարդացման, այսինքն առաջադիմության ամեն տեսակի հնարավորությունների բացակայությունը և կամ թե քիչ լինելը, անա այդ տնտեսության այդ աստիճանի դանդաղ զարգանալու պատճառը, և նրա, վոր նա յերկար ժամանակ չի կարողանում կտրվել հին հասարակության մեացորդներից:

Պետք ե նշել, վոր այդ արտադրական մեխանիզմը հատուկ է յեղել առանձնապես նախնադարյան կոմունիստական հասարա-

կությանը, վորն աստիճանաբար քայլայվում եր, բայց և այնպիս յերկար ժամանակ յուր կնիքն եր պահում ստեղծվող նոր հասարակության վրա: Նոր հասարակության այդշափ դանգաղ ձևավորումն անպայման կարող ե կասկած հարուցել ուսումնամիրողի մեջ, նրան արամաղրել այդ շրջանի մի ինքնուրույն տնտեսական ֆորմացիայի անուն տալ, բայց այդ կարող ե միտյն կասկած լինել և լավագույն գեպքում անհատ, վոչ մարքսիստ ուսումնամիրողի անձնական կարծիքը, բայց վոչ մի գեպքում Մարքսի կամ մարքսիստի: Մարքսյան մեթոդի հատկողական կիրառումը, ինչպես և ասիական տնտեսության մասին նրա արած, մասնավորապես վերջին շրջանի, դիտողությունների բարեխից ուսումնասիրությունը մեզ բերում ե այն համոզման, վոր Մարքսն ասիական տնտեսությունն ինքնարավ մի ֆորմացիա չեր համարել: Անաթե ինչ ե գրում այդ տոթիվ Պլեխանովը. «...Պետք ե կարծել, հետագայում, յերբ Մարքսը ծանոթացավ նախնադարյան հասարակության մասին Մորգանի գրքին այն ժամանակ հավանաբար անտիկ հասարակության և արևելյան արտադրության ձևերի միջև յեղած հարաբերությունների մասին նա իր կարծիքը փոխեց: Յեզի իրոք: Ֆեոդալական արտադրությունը հանդեց սոցիալիստական հեղափոխության, վորը վերջացավ կապիտալիզմի կատարյալ հաղթանակով: Բայց, որինակ, Զինաստանի կամ հին Յեզիպատոսի տնտեսության զարգացման տրամարանությունը չի բրավ անտիկ արտադրության ձևերի յերեան գալուն: Առաջին գեպքում խոսքը զարգացման յերկու Փաղերի մասին ե, վորոնցից մեկը հաջորդում ե մյուսին և առաջցում ե նրանցով: Յերկրորդ գեպքում ներկայանում ե ավելի շուտ տնտեսական զարգացման յերկու ընթացակից ձևեր: Անտիկ հասարակակարգը փոխարինեց տոհմային հասարակական կազմակերպության. նույն կազմակերպությունը գոյություն ուներ արևելյան հասարակություն ծագումից առաջ: Տնտեսական կառուցվածքը այդ յերկու ձևերից յուրաքանչյուրը հետևում եր տոհմային կազմակերպության ծոցում աճող արտադրուղականութերի զարգացմանը: Յեզի յեթե այդ յերկու ձևերը խիստ տարբեր վում են միմյանցից, այդ գեպքում նրանց տարբերման գլխա-

Վոր գծերը կերպարանավորվեցին աշխարհագրական միջավայրի ազգեցուրյան տակ՝*) ընդունելով. մերն և. — չ.), Պլեխանով, օճ. օգ. Տ. XVIII, էր. 216 — 17), Հնադարյան հասարակության արտադրողական ուժերի զարգացման տրամաբանությունը պետք է հանդեր անափի տնտեսության ձևին: Բայց մինչ այդ նա պետք է անցներ մի շրջան ճիշտ այնպես, ինչպես ոցումաժման դժու բանուեղյու գթոց ովլղությունը վերաբերության մեջ առաջարկու բարեկարգ բանություն գրադարձու գմբետ նման ավելի շուտ և աեղի տալիս սոցիալիստական տնտեսության կողմակերպմանը, վորը վերացնում է անցման այդ շրջանի տնտեսական ինքնարարավ մի ֆորմացիա անվանելու ամեն մի փորձ, այդ պետք է բացարել մեր արտադրողական ուժերի զարգացման ներկա աստիճանով և դրանց առաջ ընթանալու թափով: Հնադարյան հասարակությունն անտիկ տնտեսական արտադրական չեն և աեղիք տալիս. մեզ միանգամայն հասկանալի պատճեռությունը, պետք է, անպայման անցման ամելի յերկար շրջան ունենար: Դեռ ավելին. ինչպես Պլեխանովը և ասում, աշխարհագրական տարրեր միջավայրի ազդեցության տակ, քայլքայլով մի ինքնարար և ինքնիզմի և ինքնիզմի կազմակերպված ու լայն պրոլագանդայի միջոցով և ավելի բարձրացնել մեր բանվորական ու աշխատավորական լայն խավերի դիտակցությունը և նրանց ամբողջովին սպառագին ծառացնել բուրժուատական և մանր-բուրժուատական ամեն տեսակի հականեղափոխական եկեղողիաների գեմ—մեր որերի հրամայական պահանջն եւ:

առաջ գնալով բացասում են նույնիսկ անտիկ առանձին տնտեսական ձեր գոյությունը: Այդ, իհարկե, լուրջ ուսումնասիրության արդյունք չե, բայց մի բան միանգամայն պարզ է և այդ այն ե, վոր Ավդալբեգյանն ասիսկան տնտեսությունը տնտեսական մի ամբողջական ֆորմացիա անվանելով, զրանով միայն իր մոքի տկարությունն ե ցուցաբերել: Դրանով նա ապացուցել է և այն, վոր մարքսյան դիալեկտիկան իր համար մինչև որս ել յոթ կնիքով կնքված մի գաղտնիք և յեղել: Յեկ յեթե այս ամենից հետո ամենի, վոր հայտնաբույս «մարքսիստ» թ. Ավդալբեգյանն իր այդ աշխատությամբ յեկել և վոչ թե այսորվա աշխատող մարքսիստական մտքին ոժանդակելու, վորպիսի ակնարկներ անում և նա իր գրքույթում, կամ ընդհանրապես դրան դրական մասնակիցություն ունենալու, ընդհակառակը՝ մարքսիզմն աղճատելու աղավաղելու մի փորձ և այդ նրա կողմից, սխալված չենք լինել: Հենց դրա համար ել մարքսիզմի և լենինիզմի կազմակերպված ու լայն պրոլագանդայի միջոցով և ավելի բարձրացնել մեր բանվորական ու աշխատավորական լայն խավերի դիտակցությունը և նրանց ամբողջովին սպառագին ծառացնել բուրժուատական և մանր-բուրժուատական ամեն տեսակի հականեղափոխական եկեղողիաների գեմ—մեր որերի հրամայական պահանջն եւ:

ՀՈՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

ԱՐՎԵՍԻ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐ

«Զգայական վայելքը» Բուշեյի իդեալն է, նրա նկարչության հոգին», ասում է Գրանսիացի եստետներից մեկը՝ Կոնդուրը: Յեկ այդ, ինչպես Պլեխանովը և նկատում, «միանգամայն ճիշտ ե»: Մեռնող արիստոկրատիան այլ իդեալ ել ունենալ չեր կարող: Այդ բանը «շատ լավ եյին հասկացել և Բուշեյի ժամանակակիցները»: Բուշեյի ժամանակակիցները, ինչպես տասցինք, անկան ու ինքն բոնած ֆեռալիզմն եր, այլ կերպ տասծ՝ արագուտիզմի ջատագով ու միաժամանակ շվայտանգրի անզուգական յերկրպագու Լյուդովիկ ԽV-ն իր արքանյակներով: Մեռնող դասը մինչև իր մահվան վերջին որն ուզում եր անզայման աշխարհի բոլոր վայելքներն ել ճաշակել ուզում եր յերջանկանալ, հարբեկ և գեթ դրանով քաղցրացնել իր կյանքի վերցին բոպեները: Ել ինչ կար անելու: Յերկրի արտադրու

Պիտի հիշատակենք, վոր ասիսկան տնտեսություն վորպես մի առանձին ամբողջական ֆազա չի ընդունում վոչ միայն Պլեխանովը, այլ և Մ. Պոկրովսկին (Օչերք րուս. կոլտ, Վ.1, ներածությունը) և Կ. Կառուցկին (Ֆ. Սալվիոլու «Կապիտ. և անուանականը»): Այս վերջին յերկուաը մի քիչ

*) «Կապիտալի» III հատորում Մարքսը հատկապես քննության առնելով ասիսկան տնտեսության միալարության դատարկությը, աշխարհագրական միջավայրին տալիս և հիմնական նշանակություն:

զական ուժերի զարգացման խնդրմվ պիտի զբաղվեր, թե՛ դրա հետ շաղկապված մասսաների տնտեսական վիճակի բարեկեցությամբ: Վոչ մեկը և վոչ ել մյուսը: Յուր զարգացման պատմառական շրջանն ապրած ավատական տնտեսական սխտեմն արդեն ռեակցիոն եր դառնել և նրա գոյությունն այլևս անհանդուրժելի յեր աճող հեղափոխական նոր ուժերի համար: Քարը քարի հետեւց քանդվում, հիմնահատակ եր լինում դարերի իշխող ավատականությունը: Հետևաբար կասկած չկար, վոր «զգայական վայելքից» բացի, նա ուրիշ իդեալ ունենալ չեր կարող: «Զգայական վայելքի իդեալը միանգամայն սազական և բոլոր այն դասակարգերի համար, վորոնք արդեն անկման պըոցեսումն են գտնվում, իրենց հեռանկարները կորցրել են և այս աշխարհում այլևս անելիք չունեն: Բուշեն այդ ամենը լավ եր յուրացրել: Նա նկարում եր «վեհերաներ», «յերեք դրացիաներ», կանանց մերկ մարդիններ, շատ նուրբ ու վարժ վրձինով, սակայն միայն զգայական վայելքի համար: Մեռնող արխառոկրատիան դրա համար Բուշեցից վոչ միայն չեր արտնչում, այլ և թմբկահարում եր նրան և պահանջում, վոր բոլոր արվեստագետներն ել նրան հետեւն:

Բայց ինչո՞ւ յենք հիշում այս ամենը: Ձե՛ վոր այն, ինչ ասացի՞ք, արդեն անցյալին և պատկանում: Հենց նրա համար, վոր այս որվա մեռնող բուրժուազիայի և յերկրի մեռած արխառոկրատիայի արվեստի միջն մի ընդհանուր կապ կա: Այդ պատճառով ել անցյալի վերհիշումը յերեմն անհրաժեշտ րան և, ու մենք պետք են անենք, յերբ ցանկանում ենք ներկայի մասին արած մեր դատողություններն ավելի հիմնավորել:

Արտադրողական ուժերի զարգացման ներկա աստիճանն ու դրանցով պայմանավորվող արտադրական հարաբերությունները գիտելով, չենք կարող չնշել, վոր այսոր ևս այդ յերկուսի միջն նույնպիս սուր հակասությունն և ստեղծվել վարպիսին դոյցությունն ուներ սրանից ավելի քան մեկ ու կես դար առաջ: Իշխող կապիտալիստ դասակարգն ել այսոր անսայթաք կերպով գեպի կործանումն են գնում: Բուրժուական աշխարհի սարնական կյանքը, նրա զեխություններն այսոր հիմնականում 18-րդ դարի ֆրանսական արխառոկրատիայի զվարճանքներն են հիշեցնում: Յեկ յեթե ճիշտ ե, վոր արվեստը վերաբարդում ե մարդկանց զարգացումն ու մտքերը, հետեւաբար կասկած չկա, վոր բուրժուադիայի անկման շրջանի արվեստն անդամանում նույն իդեալը

կարող ե ունենալ, ինչ վոր արխառոկրատիայի արվեստը: Ո՞վ կարող ե պնդել, վոր անցյալին պատկանող դասակարգի «զգայական վայելքի» և այսորված «արվեստն արվեստի համար» իդեալների միջև ըստ եյության հիմնական տարբերությունն էաւ:—Վոչ վորք: Յեթե առաջինը հեռանկարներ չեր արտադրում, և այսպես ասած՝ մարդկանց գանգին չեր խփում (ըստ իբենց), այլ ձգտում եր միայն ու միայն հաճույք պատճառել, ապա յերկրորդն ել այնքան հեռու չի գնում: Գեղեցկությունը հավիտենական կատեղորիա յե: Այն, ինչ գեղեցիկ ե, մշտական ե: Յեկ վորովհետեւ մշտականը չի փոխվում, հետևաբար սուտ ե, վոր արվեստը դասակարգային ե, վոր գեղեցկության գաղափարը հարաբերական հասկացողությունն ե: Այն, ինչ գեղեցիկ եր յերեկ, գեղեցիկ ե և այսոր, գեղեցիկ ե լինելու և վաղը: Հետևաբար արվեստագետի իդեալը միայն և միայն գեղեցկության իդեալն ե, ասում են նրանք:

Արվեստն ինքնանպատակ ե, նա հասարակական, սոցիալքաղաքական խնդիրներ չի առաջարկում: Ով վոր սայթագում և «արվեստն արվեստի համար» պըինցիպից, ով վոր փորձեր ե անում մարդկանց գանգին խփել, նա դադարում է արվեստագետինելուց: «Յես ուզում եմ միայն զվարճանալ, հարթել, տվեք ինձ գինիք: Ահա բուրժուազիայի այսորված պահանջը, ահա նրա արվեստագետների դավանանքը: Միամասությունն, անգամ տիմարությունն կլիներ հակառակն սպասել, վորպեսդի բուրժուազիան հեղափոխական արվեստը կարողանա հանդուրժել և նրա արվեստագետներն արտադրեն հեղափոխական յերկեր: Անհրաժեշտ ե փոխել հասարակական այն հօգեբանությունը, վորով կը թվում ու սնունդ են առնում թե մեկը և թե մյուսը: Վորպեսդի հեղաշըրջվի վերջինը, դրա համար պետք ե կառուցել սոցիալքաղաքական նոր, հեղափոխական վերնաշենք և ստեղծել տնտեսական այլ հիմունքներ, վորոնք հասարակական հոգեբանությունը պայմանավորողներն են հանդիսանում: Վորպեսդի այդ ել լինիք, պետք ե հիմնովին խորտակել կապիտալիստական արտադրական ներկա հարաբերությունները և սահմանել նորը: Յեկ վերջապես, վերջին պահանջի իրականացումն ել շաղկապված և արտադրողական ուժերի զարգացման աստիճանի փոփոխության հետ: Վորպեսդի բուրժուազիան նորից հեղափոխական դառնա, կապիտալիստական հեղափոխական արտադրական հարաբերու-

թյուններ սահմանվի, անհրաժեշտ և պատմության անիվը յերկու դարից ավելի հետ մդել, և ունինալ արտադրողական ուժերի զարգացման այն աստիճանը, վորը հատուկ եր 18-րդ դարի ֆրանսական հեղափոխության շրջանին՝ Ֆրանսիայում: Սակայն խելքը գլխին յուրաքանչյուր անձնավորություն կտսի, վորայդ անհնար բան եւ

Արդ, յեթե անկրման ուղին բռնած կապիտալիստ դասակարգն այլև յերիտասարդանալ չի կարող, կարող և նա իր պահանջների և կարիքների մեջ ուղիկալ-հեղափոխական լինել, անտեսելով իր ազգած պատմական և պոլիտիկան: Կարող և նա իր ձգտութմներին հակառակ և իր սպասութեալ ը չարդարացնող արվեստն ու գիտությունը ստեղծել: Բնավի յերեք: Անա թե ինչու զարմանալի չե բնավ, յերբ այսոր հայկական մենշևիստի ներկայացուցիչներն ել պահանջում են, վոր «գլուխավեսագետը մի նպատակ ունենա-իրեակայուրյան նրաւալի լուսավորի ներում արտի բարու խորեցր»... (ընդգծումը մերն ե.—Հ.): (Յ. Խանզադյան, «Ա. Անարոնյան», էջ 8): Ինարկե, Խանզադյանը չե և վոչ ել մի այլ սոցիալ-դեմոկրատ մենշևիկ, վոր այսոր հետեւղական կերպով պիտի պաշտպանի բուրժուազիայի առաջադրած բոլոր պահանջները, մասնավորապես արդեստի բնագավառում (չե վոր նրանք մանր բուրժուազիայի ներկայացուցիչներն են): Սակայն վորքան ել նա այդ պըհնցիպից (բուրժուազիային սպասարկելու) սայթաքումներ անի, այնուամենայնիվ իր հիմնական տեսակետը և զրանից բղխող նպատակների իրականացման համար վերցրած կուրսը յերեք չի փոխի: Մանր բուրժուազիան յերբ իրեն հակադրում և պըսկետարական հեղափոխությանը, կամա-ակամա սպասարկում և խոշոր բուրժուազիային: Այդպես և և Խանզադյանը և ընդհանրապես միջազգային մենաշերդը:

2

«Չի կարելի, ինարկե, գիշարվեստագետից պահանջնել լիովին ձեավորված և ճշտորեն ձևակերպված աշխարհայացք»... (Յ. Խանզադյան, Մ. Մանվելյանի, «Ժամ. մելոդ.», առաջարան, էջ 8-ը). մեր պահանջները միայն այն պետք ե լինեն, վոր նա «յերեակայության հրաշալի լուսով լուսավորի հերոսի սրտի բոլոր խորշերը»... և կամ թե «մեծ աշխատանք թափի գրվածքի ճարտարապետական կառուցվածքի վրա»... (Յ. Խանզադյան, Մ. Մանվելյանի «Ան քաղաքի» առաջարանը, էջ 8): Ուրիշ, ուրիշ վոչինչ: Խան-

զադյանը համեստ մարդ ե, նա գրանով ել բավարարվում ե, Բայց ճիշտ և ասկած, վոր «ուստին յուր գործը լավ գիտե»: Անմեկ դառան մորթին հագած, նա փաստորեն զառամած զայլի զեր և ստանձնել և անտամած հարձակումներ և գործում արվեստի մարքսիստական ըմբռնման վրա: Յեվ անա թե ինչու:

Միալ ե, յերբ ասում են, թե արվեստի հետ միասին գլուխն ել պիտի գործի: Մեր կարծիքով միայն նա յե լավ արվեստագետ, ով վոր «յերեք զլիից չի զրում»: Այլ, որինակ Մ. Մանվելյանը, նա «յերեք զլիից զլիից չի զրում» այլ միշտ սրահցա: Նրա յերկերն ընթերցելիս «շարունակ զգում ես նյարդայնություն, փափուկ սրտի զգայնություն», հետեւարաց նա «գեղարվեստական լավ զրուրոցի յե աշակերտել» (եջ 5—6)... «Գեղարվեստական արտադրությունների մեջ միտքն ու տրամադրությունը չեն, վոր վորոշում են ըստ ելուրյան յերկի (ընդգծումը հեղինակինն ե.—Հ.): Գունավորումն ու բավանդակուրյունը» (ընդգծումը մերն ե.—Հ.): Վերջինիս դերը միայն նրանումն ե կայանում, վոր «յուր սուր այգիմկրատով կտրում» և «զեն ե շպրտում ավելորդ ծաղիկները» համաձայնվելով Հ. Հայնեյի հետ, կրկնում ե Խանզադյանը («Ա. Անարոնյան», էջ 14): Անա այն ամենը, ինչ մեր հարգու հեղինակը կարող եր ասել իր թեզերն ապացուցելու համար: Յեվ յեթե նրա բոլոր ասածներն ի մի հավաքենք և աշխատենք դրանցից պարզ ու վորոշ յեղրակացություններ հանել, կստացվի, վոր իբր թե ըստ մարքսիզմի»

1. Զկա և գոյություն չունի արվեստի դասակարգային ըմբռնում: Արվեստը վերդասակարգային, վոչ-պատմական, տրամաբանական կատեգորիա յի: Յեվ՝

2. Ով վոր արվեստագետ ե, նա միայն գեղեցկության մասին պետք ե հոգ տանի: Գեղարվեստական յերկի մեջ միտք դնել, սոցիալ-քաղաքական նպատակներ հետապնդել՝ ընդունելիք բան չե և, այդ կնվատացնի, անգամ լիովին կիշացնի յերկի գեղարվեստական արժեքը: Ավելի պարզ ու հուկիրճ ասած, ա վեստի բոլոր խնդիրներում ճիշտ ե բուրժուազիան տեսակետը, սխալ ե մարքսիստական մեթոդոլոգիան:

Սկսենք առաջին հարցից:

Ճիշտ և արդյոք, վոր գեղեցկության զգացողությունը բիորդիքական հիմքեր ունի: Յեվ Պետրանովս այդ մասին նկատում ե, թե «գեղեցկության իդեալը, վոր տիրապետում ե տվյալ

ժամանակ, տվյալ հասարակության մեջ, կամ հասարակության տվյալ դասակարգի մեջ, հիմք ունի մասամբ մարդկային ցեղի բխորդիքական պայմանները» (Ըօ՛, տ. XIV, էտր. 14): Հսու Դարձինի այդ, հանդամանքը խոշոր գեր և խաղացել կենդանական աշխարհում, և այսոր ել շարունակվում և այդ: Մեզ յեթե մի ժամանակ վերսիշյալ դրությունն ապացուցելու համար կարիք կար, վոր Դարձինը բազմաթիվ որինակների ոգնությանը դիմեր, այսոր այդ պահանջն այլևս չի զգացվում: Մեր յերկրի դպրոցական աշակերտն անդամ գիտե այն մասին, թե ինչ մեծ զործ և կատարում գեղեցկության զգացողությունը թուշուների և անդամ վայրի կենդանիների կյանքի մեջ: Բայց ի՞նչ կապ ունի այդ արվեստի հետ: Արվեստը միանդամայն սոցիալ-դասակարգային մի կատեգորիա յի: Սոխակի սերը վարդի հանդես գեղեցկության զգացողություն և, բայց արվեստ չե: Արվեստը ստեղծվում և մարդկային հասարակության մեջ շնորհիք մարդու արտադրական գործունեյության: Պեխանովը շեշտը դնելով գեղեցկության զգացողության բիոլոգիքական կողմի վրա և չտարբերելով այդ արվեստից, անկասկած խոշոր սխալ և կատարել: Այդ սխալ դրությունիցն ել յենելով հայկական մենչեղմի ներկայացուցիչներն այսոր փորձել են անում համաժարդկային մշտական կատեգորիաներ հայտարարել արվեստի կատեգորիաները: Որինակ՝ Խանզագյանն այն համոզումն ունի, վոր «Հոռետեսության ակունքները դժվար թե յերբեն ցամաքեն աշխարհում»¹) (Մ. Մանվելյանի «Ժամ. մելոդ.» առաջաբանը, եջ 13): Ինչպես գիտենք, հոռետեսությունը, վորն անպայման սոցիալական արմատներ ունի: Հոռետեսությունը, վորը վորպես մարդկային հոգեկան ապրում, զգացողության մի յեղանակ և հատուկ պատմական զարդացման վորոշ շրջան անցած հասարակության վորոշ

1) Շարունակության մեջ հեղինակն ափելացնում և, թե Շնորետեսությունը քրտն հիմք ավող յերեսությունը չի կարելի անտեսել, բայց կարելի յե հաղթահարել: Սա միանդամայն անտրամարտանական և Յեթք հոռետեսության ակունքներն անցամաքելի յեն, հետեւբար նրան հիմք տվող յերեսությունը ել յերեսք չի կարելի հաղթահարել քանի վոր այդ ակունքները հենց հիշատ յերեսությունը են: Իսկ յեթք ընդհանրապես մեկի մասին կարծիք են հայտնում վոչ թե նրա առանձին վրիտումները հիմք ընդունելով, այլ յենելով նրա առաջարկած հիմնական դրություններից և հետապնդած տենդենցից: Խանզագյանի հիմնական տեսնեցը պարզ և ապացուցել արվեստի ապացուցման թեորիան:

խմբակցությանը, վորը մինչև որս խոշուր նյութ և մատակարարել գեղարվեստական գրականությանը և ընդհանրապես արվեստին: Բոլորովին ել գաղտնիք չե, վոր դասակարգերի անկման շրջանի ամբողջ արվեստը նիմնականում հոռետեսական (պեսիմիստական) արվեստ ե:

Արդ, յեթե հոռետեսության ակունքներն անցամաքելի յեն, յեթե աշխարհում հոռետեսությունը յերբեք չի կարող վերանալ, ինչ կասկած, վոր դա յուր արտահայտությունը պիտի և ունենա նուև գեղարվեստական գրականության մեջ (ինչպես մինչէ որս և յեղել): Մրանից յեղակացություն. — Գեղեցկության հասկացողությունը պատմական կատարեցրի չե: Բայց ի՞նչ և ասում իրողությունը Անշուշտ, հակատակը: Որինակ, ըստ հենց Պետրաշնովի, գեղեցկության իդեալը յերբեք ել ամբողջությամբ բիոլոգիական հիմքով չի պայմանավորվում: Ընդհակառակը, նա գտնում է, վոր այդ գեպքում բիոլոգիական հիմքի մասին խոսք կարող և լինել միայն մասամբ: Գեղեցկության իդեալը մասամբ պայմանավորվում և նաև տվյալ՝ «հասարակության կամ դասակարգի ծագման» գոյության պատմական պայմաններով» (նույն տեղ), Այս հանզամանքը մեծ խնամքով մեր «մարքսիստա» հատետների կողմից թագցվում է, վորովհետև այդ ձեռնոտու չի նրանց, քանի վոր ճշմարտության հայտարերումը հակասում է այն դասակարգի շահերին, վորի «պատվավոր» պաշտպանը լինելու «բախւարն» ունեն նըտանք:

Դարվինն ասում է՝ այն փաստը, թե ինչմեւ վորոշ գույներ համախմբված են այս և վոչ թե այլ կերպ, քիչ և յենթակա բացարության, ինչպես և այն, թե ինչմեւ այս և վոչ այլ առարկան և ընդունելի մեր գեղարվեստական ճաշակի համար:

Հետեւաբար արվեստի ըմբռնման բանալին վիճառել բիոլոգիական հանգամանքների մեջ՝ հիմարություն կլիներ, ինչպիս և վորոշ (բայց վոչ արվեստի) հարցերի բացարության համար հրաժարվել բիոլոգիական արմատների ողնությամաւ դիմելուց: Բիոլոգիական կարող և բացարել այն, վոր կլինդանիներն «ի սկզբանե» գեղեցկության վորոշ զգացողություններ ունեն, բայց թե ինչմեւ իտալիան Միքել Անջելո և կամ թե Ռաֆայել ծնել, իսկ Ավգանը ըստանումը վոչ, այդ արդեն սոցիոլոգիայի գործն ե: Մարքսիստական սոցիոլոգիան ե, վոր կարող և ճեշտ կերպով լուծել այն հարցը, թե ի՞նչպես են առաջացել զանազան ժողովուրդների կուլ-

տուբաները և պատմական գարգացման ինչ շրջաններ են անցել դրանք, իսկ մարքսիստական սոցիոլոգիան վոչ թե ընդունում, այլ բացառում ե «արվեստն արվեստի համար» թեորիան և կամ թե արվեստի տրամարտական կատեգորիա լինելը։ Ըստ մարքսիստական աշխարհայեցողության, յեթե յերեկ Բուշեյի արվեստը կարող եր հասարակության վորոշ խավին հուզել, ապա այդ նրանից եր, վոր Բուշեն կարողացել եր ճիշտ կերպով ըմբռնել և գեղարվեստորեն վերարտադրել այդ խավի հոգերանությունը, նրա ապրումներն ու ցանկությունները։ Այսոր Բուշեն մեղ այլևս հուզել չի կարող։ Մենք այլ հասարակության ծնունդ ենք, մեր գեղարվեստական զգացողություններն այլ են, մեր պահանջներն ել այլ Հետեւարար կան գեղեցղության վոչ թե հավիտենական, այլ միայն և միայն պատմական կատեգորիաներ։ Այն, ինչ այսոր գեղեցիկ ե, վաղը կարող ե տպել յերեալ և ընդհակառակը։ Միթե իրողություն չե այն, վոր այսոր արդեն մեր գեղարվեստական պահանջներին հագուրդ տվող վոչ թե իլիականն ու Վողիսականն են, այլ «Յերկաթե Հեղեղը», «Պեմենտ»-ը և ժամանակակից պրոլետարական գրողների ուրիշ յերկերը։ Սակայն ճիշտ ե և այն, վոր իլիականի և Վողիսականի ընթերցումն այսոր ել գեղ մեղ գեղարվեստական վորոշ հաճույք և պատճառում։ Գեղարվեստական հաճույք են պատճառում նաև Անջելոյի և Ռաֆայելի քանդակները, անգամ հին հունական կուլտուրայից շատ բան, վորը մեղանից տասնյակ դարերով ե բաժանվում։ Ինչոք բացատրել այս—Մարքսը խոսք բանալով այդ մասին, հարցնուած ե «ինչու մարդկային հասարակության մանկությաւնը, վորտեղ նա ամենից լավ եր զարդանում, չի կարող մշտական հիացմունք պատճառել մեղ, վորդես այլևս չկրկնվող մի ասաիձան» (Է քրիտ. հոլով. էկօն., էտք. 34)։ Հենց այն պատճառով, վոր գեղարվեստական զգայական տարրերը վորոշ չափով դեռ կապ ունեն անցյալի հետ, կպատասխանելինք մենք։ Համենայն գեպս, այլ ժամանակվա արքաների հաղթանակների և կամ թե նրանց խրախնանքների ու այլ կենցաղային հոգեկան ու հոգերանական ապրումների գեղարվեստական վերարտադրությունը չե, վոր մեղ այսոր գուր ե զալիս։ Մենք հին հունական արվեստին մոտենում ենք այլ կերպ, բոլորովին այլ ակնոցներով, քան նրա ժամանակակիցները։ Մեր պահանջները նրանց պահանջների հետ, բալականաչափ հասկանալի պատճառներով, մանգամայն անհարիր են։

Մարքսի խոսքերով ասած՝ մենք մանկությունից վերցնում ենք միայն այն, ինչ վոր լավ ե և կարող ե մշտական հիացմունք պատճառել մեզ։

Բայց արդյոք այդ հանգամանքը բացասարեւմ ե գեղեցկության կատեղորիայի պատմական նշանակություն լինելուն։ Բնավ յերբեք։ Մարքսը վերեւում հիշատակված մտքերից հետո նկատում ե, վոր հունական այդ կուլտուրան վոչ միայն չեր ժմառում, այլև ամբողջումին պայմանագործում եր ժամանակակից հասարակական եկոնոմիկայով։ Իսկ այդ շրջանի եկոնոմիկան ամբողջովին դասակարգային հիմունքներով եր կառուցված։ Հենց զրա համար ել մարքսյան դիալիկտիկայի խորությունը կայանում ենակ նրանում, վոր նա գեղեցկության զգացողության պայմանները բացարձելիս պատմական սրբնացիպից յերբեք չի սայրախում և արվեստի վոջ պատմությունը բացատրում ու պարզաբանում ե՝ իմմ բնդուներով միայն և միայն մի պրինցիպ, ըստ վորի հավերժական կատեգորիաներ գոյացյուն չունեն։

3

Նորից նույն հարցը, բայց այս անգամ արդեն այլ կապակցությամբ։ Ճիշտ ե արդյոք, վոր արվեստը դասակարգային չե և, վոր գլխավորն ե, գեղարվեստական յերկի մեջ միտք դնելն անընդունելի բան ե։ Վոչ միայն ճիշտ չե, այլ և հարցի մասին այդ կերպ ուատելն անզամ տիմարություն կլիներ։ Որինակ, ինչ եք կարծու բուշեյի արվեստը, վորի մասին խոսք յեղավ վերևում, դասակարգային ե։ Անշուշտ այսու «Զգայական վայելքը» հեղափոխական պրոլետարիատի իդեալը չե, այլ մեռնող արիստոկրատիկայի։ Յեկ կամ գուցե կասեք, թե «Համելետը» դասակարգային յերկ չե, բայց դարձյալ կսխալվեք, վորովհետև անգամ ֆեոդալական հասարակության ջատագովներն ել յուր ժամանակին խոստովանվել են, վոր «Համելետը» անգլիական նորածագ բուրժուազիայի հեղափոխական պրամագրությունների արտահայտությունն ե։ Որինակ Պլեխանովը ասում ե, թե «Պոպկեն ցավ ե հայտնել, վոր Շեքսպիրը գրել ե ժողովրդի և վոչ թե բարեկիրթ մարդկանց համար»։ «Ենքառապիրը լավ կգրեր, յեթե ոգտվեր թագավորի հոգանակությունից և պալատականների աջակցությունից»։ Ուրեմն ըստ Պոպկեյի Շեքսպիրը «ժողովրդի» պոետն ե, մի դասի, վորը յուր ժամանակին որհասական պայքար եր մղում ֆեոդալիզմի դեմ։ Պոպկեյին դուք

Նի գալիս Շեքսպիրի արվեստը, վորովհետև այդ չի ծառայում այն գասակարգի շահերին, վորի ներկայացուցիչն եր Պոպլին:

Այս և նման բազմաթիվ որինակներ կարելի յե բերել վորոն մազաշափ անգամ կասկած չեն կարող թողնել արվեստի գասակարգային լինելու թերթիայի հշմարտության մասին: Սակայն բարձրարվենք սրանով և նկատենք, վոր յեթե այսոր մեղտնում Խանդադյանը և մյուսները փորձեր են անում արվեստի անդառակարգույնության թերթիան ապացուցել, այդ միայն և միայն հետևանք է նրան, վոր կործանման ճամբան բունած կապիտալիստ դասակարգն այլս անկարող և ճշմարտության յերեսին բաց աչքերով նայել: Նա կամա-ակամա պիտի ձգտի ապացուցել վոր արվեստը գասակարգային հանդամանք չունի, վորպեսզի այնուհետև հեշտ լինի նախարարարել պրոլետարական արվեստին և յերբեք բուրժուական արվեստը հրամցնելով աշխատավորական մասամբներին վորպես միակ ընդունելի արվեստը, նրան դաստիարակել բուրժուական վոգով ու արագիցիաներով: Անա այդ նպատակն և հետապնդում և Խանզադյանը, յերբ զրում, և, թե «Չի կարելի, ի՞նտրկի, գեղարվեստագետից պահանջել լիովին ձևավորված և ճշտորեն ձևակերպված աշխարհայացք»: Յեզ կամ թե յերբ նույն պայքար և հայտ գարում արվեստի միջոցով նաևսոցիալ-քաղաքական նպատակներ հետապնդող տեսությանը:

Չպահանջել մեր որերի գեղարվեստագետից, վոր նա աշխատի հարազատությամբ և գեղարվեստականորեն վերաբռնիկ պրոլետարական կենցաղը, նրա հոգեբանությունը, նրա մոտեցումը կյանքի ոյս կամ այն յերեսութներին և այլն, չաշխատել սժանդակել այդ ասպարիզում յեղած թերությունները վերացնելուն, չքննադատել նրանց իդեոլոգիական սայթաքումները, այլ միայն ուշադրությունը կենտրոնացնել արվեստի վրա, արվեստը դարձնել ինքնանպատակ, գաղափարի հարցը մեկդի նետել, այդ միևնույնն և թե հրաժարվել պրոլետարական կոնսորցի և թույլ տալ, վոր բուրժուական արվեստը նորից գլուխ բարձրացնի: Խտնդադյանը հենց այդ և պահանջում: Նա գտնում է, վոր գեղարվեստական յերկի մեջ «միտքն ու տրամարտնուրյունը չեն, վոր վորում են բայ եյուրյան յերկի գունավորումն ու բովանդակությունը, պակուրյունը», այլ կերպ ասած, յեթե մեկն ու մեկը մի հակառական գրվածք ներկայացնի, մենք այդ պիտի հրատա-

արամաբանությունը յերկը որդական և անգամ արժեք չունեցող հանգամանքներ են:

Սակայն մենք գիտենք, վոր ֆրանսական հեղափոխության շրջանի քննադատաները քարեկոծում ենին այն եստետներին, վորոնք համարձակվում ենին բուրժուական գաղափարախոսությանը հակառակ զնալ, և կամ թե սայթաքել դրա անշեղ պաշտպանությունից: Դեռ ավելին, նրանք բուրժուական դատողությունն արվեստի ամենակարենոր տարբերից մեկն ենին համարում: Պէտական գաղափարի ամենակարենոր տարբերից մեկն ենին համարում: Պէտական հեղաշրջման դարաշրջանն ապրող բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներից համար արվեստի մեջ դատողականությունը գողովուրդներից համար արվեստի մեջ պականական համարելով, նկատում են, վոր «դատողակամիանգամայն բնական համարելով, նկատում են, վոր արագացական մասամբ նույնը Սակրատի ժամանակի հույների մեջ պական չեր դարձացիաներությունը համարում են կատար ժամկորիններին: Յեզ Դատողությունը հատուկ եր նաև բոլոր ժակորիններին: Յեզ դատությունը համեստի մինարուղին իզուր դատողությունը համարում են Համելետի մինարուղին իզուր դատությունը շանզադյանը (18-րդ դարի թատ. և այն, եջ 57—58). Խանզադյանը համառորն ազնում են, վոր վոչ: Արվեստը մաքի թշնամի յեւ միայն համառորն ազնում են, վոր վոչ: Արվեստական գրականության ջատագովներն են, վոր այդ պրոլետարական գրականության ջատագովներն են, վոր այդ պահանջի վրա պնդում են: Յեզ նա իր այդ գաշնակցունամտառությունների հիմնավորման համար ամեն անգամ Պէտականովի անունն է հիշատակում, ձգտելով այդպիսով խաչ քաշել նրա թողած գրականության վրա: Սակայն ինչպես տեսանք, դրական ժառանգության վրա Պէտականությունը առաջ այն համոզում ունի, վոր արվեստը Պէտականովը նախ և առաջ այն համոզում ունի, վոր նա արտահայտում ե այս կամ այն դասակարգային ե, վոր նա արտահայտում ե այս կամ այն խմբակցության արագական արական արական արական արական գունդիներ և կենցաղը: Յուրաքանչյուր դասակարգ առաջազրուելուներն ու կենցաղը: Յուրաքանչյուր դասակարգ առաջազրուելուներ, և վորոշ կոնկրետ խնդիրներ, հասարակական վորոշ իգեալներ, վորոնց իրականացման համար ել պայքարում ե նա: Ամեն մի դասակարգ, վորպեսզի կարողանա իր հետապնդած նպատակները շատափույթ և նպատակահարմար (խոսքը դասակարգային նպատակահարմարության մասին ե) կերպով իրականացնել, գործողության մեջ և դնում իր արամազրության տակ յեղած միջոցները: Արվեստն այդ կարևորագույն միջոցներից մեկն բոլոր միջոցները: Արվեստն այդ կամաթեթ ակտում սկսում ե արվեստի ե: Այդ պատճառով ել նա կամաթեթ ակտում սկսում ե արվեստի միջոցով իր սոցիալ-քաղաքական նպատակների իրականացման համար պրոպագանդա մանել վերցրեք թեկուղ նորից 18-րդ դարի քրանսական գեղարվեստական դասակարգամբ շահերին: Յեթե Ժավիթ Փրանսական գեղարվեստական

իր նկարների համար նյութ եր ընտրում բուրժուական հեղափոխության հերոսական որերի հերոսական կոիզմերից կամ թե հերոսներից, յեթե նա նկարում եր, թե ինչպես հեղափոխության համար նահատակված Բրուտի վորդիներին ներս բերելիս, Բրուտը, յերբորդ դասի այդ ներկայացուցիչը, անդրդվելի կամք երցուցաբերում, և կամ թե Ժան-Պոլ-Մարատի մահը, նա դրանով մի կոնկրետ միտք եր արտահայտում՝ բուրժուազիան պիտի հազթի: Յեզ Պիեսանսով այս հանգամանքն ե նկատի ունենում, յերբ պատասխանելով Խանզադյանի նման գատողներին, զրում ե. «Սխալ ե, վոր արքեստը միշան մարդկային զգացողություններն ե արտահայտում: Վոչ, նա արտահայտում ե և զգացողությունները և մՏենքը, բայց արտահայտում ե վօչ թե վերացականուն, այլ կենդանի պատիերներով!» (Ընդգծութիւնները հեղինակին են—Հ. Սոչ., թ. XIV, ստ. 2):

Արդ, յեթե մտքերի արտահայտումը նույնպիսի կարևոր հանգամանք ե, ինչպես և զգացողություններինը, հնարավո՞ր և արդյօք մեկից պահանջել բանվոր դասակարգի մտքերի և զգացողությունների գեղարվեստական ճշգրիտ վերարտադրումը, բայց միաժամանակ չպահանջել, վոր նա ձևավորված աշխարհայցը ունենաւ: Սուտ չան ե, ով վոր նիմնականում չի յուրացըել հեղափոխական պրոլետարիատի ուսմունքը, նա յերենք ել չի կարող նրա հարազատ յերգիչը լինել: Ինչ խոսք, դասակարգային բնազդը, ներկա գեղքում, խոշոր գործոն և հանդիսանում, բայց առանց գիտակցական տարրի մենք յերենք ել իիծոլող, սիպիկան յերգիչ ունենալ չենք կարող: Ով վոր հակառակն և պահում, նա կամ հիմար ե և կամ թե դիտավորյալ և այդպիսին ձևանում, վորպեսզի կարողանա իր հականեղափոխական տեսակետները, վորոշ որյեկտիվ պատճառների հետեւանքով, սքողված ձևով հրամցնել աշխատավորական մասսաներին: Մեր կարծիքով Խանզագյանը յերկրորդ խմբին և պատկանում: Բուրժուա-դասակարգային սուրբյեկտիվմեց յենող գիտավորությունն այսոր նրան մղում և գեղի արգեստի մարսքսիստական ըմբռնման բացասումը: Բարի հանապարհ: հանդերձյալ կյանքում դուք ձեր տերությունը մեծ վարձատրություն կստանաք:

Բայց նորից դառնանք Պէխանովին. Դա ասում եւ «Յես
կարծում եմ, վոր արվեստն սկսվում ե այն ժամանակը, յերբ մարդը.
Նորից վերաբռագրում ե իր մեջ զգացմունքներ և մտեր, վորը

զգացել և նա իրեն՝ ըրջապատղ իրական աշխարհի ազդեցության ներքո, և դրանց տակիս և վարու պատկերավոր արտահայտուրյաւն»:

Մի այլ առիթով նորից անդրադառնալով այս թնդրին, Պետքանովը գրում է. «...առաջնորդ գաղափարական բովանդակության գեղարվեստական յերկ գոյություն ունենալ չե կարող նույնիսկ այն յերկերը, վորհնց հեղինակներն ավելի արժեք են տալիս ձերին միայն և հոգ չեն տանում բովանդակության մասին, այնուամենայնիվ այսպես թե այնպես, արտահայտում են վորոշ գաղափարը» (նույն տեղ, եջ 137). Բայց վեր գաղափարն ե, վոր ամենից շատ պիտի հուզի և արտահայտի ժամանակակից գեղագետը, իհարկեւ առաջազրու և հեղափոխական ողբոլետարիխտի գաղափարը, ասում է Պետքանովը: Այդ հանգամանքը, ըստ Պետքանովի, նրանց տաղանդի ուժը վոչ թե կպականացներ, այլ «կմեծացներ»: Իսկ Խանողադյանը փորձում է գաղափարի դերը վոչ միայն նվաստացնել այլ և բացասել և այդ բնավ ել պատհականություն չե:

Դեռ Խանզադյանից շատ առաջ է, Տուստոյն եր, վոր Ժիտուս
եր մտքի զերն արվեստի մեջ, և Պեհանովը հենց նրան, ել
առարկում եւ Յեթե այսոր Խանզադյանն ամեն պատեհ տոիթին
մեծ հաճույքով է. Տուստոյից մեղքերութիւնից և անում և արվեստի
խնդիրների մասին արտահայտած սրա կարծիքներն ընդունում
վորպես միակ ճիշտ տեսակետներ, այդ ելքնավ պատահականություն
չե: Պեհանովին հերքելու համար անհրաժեշտ է ապացուցել
վոր ճիշտ եր է. Տուստոյը, միանդամայն սխալ եր Պեհանովը:
Մարգսիկմը քննադատելու մի պրիում և այդ, վորը հատուկ և
պրոետարական գործի բոլոր ռենեգատներին:

¹⁾ Պլեսանովի այս մյուս ձեռակի բարպարակութեալ արվեստի ասթղուացած անապարհեալ ձեռակի բարպարակութեալ համարելու ունշուազ չեւ կարելի, բայց անապարհեալ յեւ նըս այն միտքը, թէ միաքը նույնական արվեստի տարրերից մեկն ե, զորք մենք աւստեղ պալուսպանում ենք:

ու բավանդակությունը միտք չե, վար վարուսմ ։ Զափի մասին հանգաղյանի արած դիտողությունը յերբեք ել չի հերքում իր հիմնական միտքը թե՝ գեղարվեստագետը միայն զգացողություններ և արտահայտում, այդ միայն մի սայշաքում և ընդհանուր դրությունից, վորը հատուկ և մարքսիզմի բոլոր քննադատներն, յերբ նրանք փորձեր են անում միաժամանակ «հավատարիմ» մնալ մարքսիզմին։

4

Անշուշտ, արվեստի մարքսիստական ըմբռնման այս բոլոր հիմնական դրությունների դեմ առարկելը վորոշ կոնկրետ նպատակ և հետապնդում։ Մենք այն կարծիքին չենք, վոր հայկական մենշերզը քննադատելով մարքսիզմի սկզբունքները, գրանից մեր առողյա խնդիրների գերաբերյալ առաջարկներ չի անում։ Ընդհակառակը, նրա ամբողջ պայքարը հենց նրա համար է, վորպեսպի կարողանա իր տեսական դրությունները կենսագործեր Յեղ ահա թե մեր գրականության և ընդհանրապես արվեստի հետազա զարգացման ինչ դեղատում և առաջարկում նաև

«Յավով տետք և նկատել, վոր ոռւսահայ բանաստեղծության մեջ մ. Պատկանյանի մահվանից հետո կամաց-կամաց չքացան առնական ուղղական յերգերը» (թ. Ավդալբեգյան, «Ա. Թումանյան», էջ 31, 1926 թ.): Ինչպես հայտնի յերբ, մի գրող, վոր իր ազգային բուրժուազիայի շահերից բացի, ուրիշ վոչինչ չեր տեսնում։ Ավդալբեգյանը գանդատվում է, վոր այսոր նրան հետեւողներ չկան, վոր մեր իրականությունը թթու շովինիզմը փառաբանող յերգիչներ այլևս չի ծնում։ Նա նախանձում է, իհարկե, այդ բոլորի համար և պահանջում է, վոր իրականությունը, վորքան կարելի յե շատ ծնի «պայքարի տանջանքով լցվածներ, վորոնք կաղաղակեն հերոսարար»։

«Յերբ ապա սաստ, յերբ սրի շաչյուն, փողի ծայներ, մարտի գոչյուն»...

«Հայ Պառնասում վաղուց լոել են պատերազմի աստծուն, արի Արեսին նվիրված որհներգությունները», սբարի անհուն կսկիզբ ավելացնում ե Ավդալբեգյանը։ Իհարկե, ընթերցող կարող ե այժմ նկատել, վոր այդ տողերը զրկել են 1914 թ., բայց առնվազն քաղաքական յերեխա պետք ե լինել չհասկա-

նուլու համար, վոր անփոփոխ, տուաջարանում առանց անհրաժեշտ դիտողություններ անելու 1926 թ. վերահրատարակվող զրքույլի մեջ արտահայտվող մաքերին հեղինակը համաձայն ե և այսոր։ Յեղ Ավդալբեգյանն այդ կերպ ել վարվել ե, հետեւարար լիովին համաձայն և իր 1914 թ. տեսակետների հետ Բացի այդ, չե վոր վոչ բարով Ավդալբեգյանը դեռ 1914 թվից իրեն մարքսիստ և համարում։ Միթե այդ մարքսիստի առաջարկ ե, Միթե հեղափոխական պրոլետարիատի կողմնակիցը նման տեսակետ կունենա արվեստի նման մի կարևոր խնդրի վերաբերյալ իհարկե, վոր։ Սակայն չզբաղվենք տքսիոման ապացուցելու իզուր աշխատանքով։

Քննենք այն հարցը, թե ինչնիվ բացատրել, վոր հայկական մենշերզի ներկայացուցիչներից մեկը՝ Խանզադյանը, արվեստի մեջ գաղափարի գերը բացասում է, մինչդեռ մյուսը՝ Ավդալբեգյանը հակառակն և պնդում. նա պահանջում է, վոր մենք բանաստեղծները նացիստալիզմ յերգեն։ Մեր կարծիքով բացատրության առանձին մի բան չկա այստեղ։ «Արվեստի արվեստի համար» թեորիան բուրժուական թեորիա յե։ Ամեն մի բուրժուատ կան թեորիա կամ նացիստալիզմական և կամ թե ճանապարհ և հարթում թթու շովինիզմի համար։ Խանզադյանը արվեստի ընդհանուր հարցերով գրաղիկելով, հայ նացիստալիզմի համար ճանապարհ և հարթում, իսկ Ավդալբեգյանը ոգտվում և գրանից և նապարհ և հարթում, այլևս արդեն առանց հիմնավորման դիմելու՝ տուաջարկ և պնդում։ Այլևս արդեն առանց հիմնավորման դիմելու՝ տուաջարկ և պնդում։ Այստեղ կա աշխատանքի հաօարակ բաժանում և ուրիշ վոչինչ։

Բայց դառնանք Ավդալբեգյանին և տերենենք, թե նա ուրիշ ել ինչ գոհար մտքեր և արտահայտում, ինչ կասկած, յերբ նա ուղարկածում է, վոր մեր յերգիչը «պատերազմի աստծուն, արք Արեսին որհներգի», պիտի բացապի և մեր հեղափոխության սոցիալիստական բնույթը։ Յեղ նա այդ մասին պարզ կերպով արտահայտում է.

«Միթե պիտի վարակվել Փարվանա գտեր տրամադրաւթյամբ, — ասում ե Ավդալբեգյանը, յերբ նա աղաղակում է։

«Հայրիկ, հայրիկ, միթե չկա

Ես աշխարհում անշեղ հուր,

Թառամում ե սիրու ահա,

Պաղ ե այս կյանքն ու տիուր»...

«Վոչ, — պատասխանում ե նա, — կա»—

«Անկասկած կրացվի պայծառ առավոտ»:

(«Հայ պատր Հ Թուժանյանի յերկերում», էջ 14):

Ի՞նչ առավոտի մտուն ե խոսքը, չե՞ վոր սոցիալիստական հեղափոխությունը մեզ մոտ արդեն կատարվել ե, չե՞ վոր մենք արդեն խորհրդացին մի աշխարհ ունենք, վորտեղ աշխատավոր մարդկությունն իր բախտն ե դարձնում: Մենշևկ Ավդալբեգյանը, վոր ուրիշ բաղձանքներ ունի, շարունակ ուրիշ առավոտների մտելին ե յերազում: Նա լիովին համոզված ե, վոր կա ինչ վոր բուլորովին մի նոր, անշեղ մի հուր, «վոր տաքացնելու յէ մարդկության կյանքը և յերջանկացնելու նրան», միայն թե պետք ե ունենդրել պատմության ձայնին: Պատմությունը, ըստ հայ Ռւսարյալովի, մի նոր ապագա յէ գուշակում մարդկության համար, և այդ ապագան, վորպես թե, ծնվում ե հենց մեր որերում, մեր հեղափոխության շնորհիվ: Իր ուսուցիչների որինակին հետեւլով՝ Ավդալբեգյանը փորձում է բացասել մեր հեղափոխության բնույթի լինինյան դնահատականը՝ անտեսելով այն հանգամանքը, վոր սոցիալիստական բնույթն ապացուցվել ե ինքն իրմով, իր տասնամյա գոյությամբ: Հենց դրա համար ել մենք այսոր հաստատ կերպով կարող ենք ասել, վոր մեր աշխատավորական հայրենիքում «լուս տու և յերկնահաս ալիքներով բոցավառվել ե» արդեն վոչ թէ «Փարզանա զատեր յերազած հուրը», այլ պրոլետարիատան հեղափոխության հուրը: Մեր պրոլետարողն այսոր յերգում ե վոչ թե մ. Պատկանյանի իդեալ՝ արի Արեսներին, այլ բանվոր դասակարգի ստեղծագործական ուժը, նրա բազկի թափը, նրա կամքի կորովը:

Ճիշտ ե, պրոլետարական արվեստը դեռևս բավականաշափ թույլ ե, գեր մենք Շեքսպիրներ և կամ Գյոթեներ չունենք, բայց այդ ել կունենանք, վորովհետև մենք կարող ենք և ապագան

(«Կոմոնիստ» № 11—12, 1927 թ.)

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ

ՄԵՆՇԵՎԿՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆԸ

(Պ. Ավդալբեգյանի գրի մասին)

1

Ո՞վ եր Միքայել Նալբանդյանը, ի՞նչ սկզբունքներ եր դավանում նա, ի՞նչ տեղ ունի նա մեր հասարակական, սոցիալ-քաղաքական, փիլիսոփայական մտքի զարգացման, պատմության մեջ: Հարցեր են սրանք, վորոնք այսոր ավելի քան յերբեմ կարու են մեկին՝ մարգարատական լուսաբանության: Ասում ենք ավելի քան յերեւե, վորովհետև մեր անցյալի մատերիալիստական՝ ըմբռնումն և դրանից անհրաժեշտ յեղակացության մեջ անելը մեր կուլտուրական հեղափոխության առողջականության մեջին են: Մենք մեր անցյալը դեռևս չենք ուսումնասիրել: Մենք գեր մեր անցյալի մասին համարյա թե վոչ մի լուրջ մարգսիստական գործ չենք ատել մեր ընթերցօղներից, մեր յերիտասարդ սերնդին, վորն այսոր ծլում ու ծաղկում ե: Յեթե կուլտուրական հեղափոխությունը՝ միաժամանակ մասսաներին մարգսիստական՝ մատերիալիստական դաստիրաբակություն տալ և նշանակում, ապա մենք այդ անել չենք կարող առանց միաժամանակ մեր անցյալ կուլտուրայի արժեքների գերի, նշանակության ճշգրիտ ըստուման: Մեր իրականությանը, ինչպես հասարակական մտքի զարգացման պատմությանն անպայման անհարցիությունը նվիրել են, այդ հարցերով վորոշ ուսումնասիրություններ նվիրել են, այդ հարցերով անհամանը զբաղվել են, սակայն զբանցից և վոչ մեկն ել այսոր պրոլետարիատի համար ընդունելի չեն: Այլ ուսումնասիր հեղինակները գուրս չգալով պրոլետարիատի ծոցից, կանգնած մինելով որթոգրուսալ մարգսիզմի տեսակետի վրա, յերկութներին տելել են, բուրժուական բացարություն:

Նույնը և Նալբանդյանի վերաբերմամբ, վորը մեր հասարակական մտքի զարգացման պատմության մեջ առանձին խոշոր տեղ ունի: Զնայած վոր, հասեփատած մեր մյուս հեղինակների հետ, շատերն են զբաղվել Նալբանդյանով, շատերի են ների համար սոցիալ-փիլիսոփայական ամբողջական ճշգրիտ փորձել նրա սոցիալ-փիլիսոփայական ամբողջական ճշգրիտ գեմքը տալ բայց քչերին և հաջողվել քիչ թե շատ ճիշտ մոտեցում ունենալ խնդրին և հարցերն ուղիղ լուծել: Այդպիսիներից

49

մինչեւ որս մեղ հայտնի յե միայն ընկ. Մյասնիկյանը, Սա յե այն միակ անձնավորությունը, վոր Նալբանդյանին մոտեցել ե վոչ վորպես բանաստեղծի, կամ միայն վորպես տնտեսական հարցերով զրադվոր անձնավորության և հրապարակախոսի, այլև վորպես փիլիսոփա-մտածողի, և աշխատել ե նրա այդ ուղղությամբ հարուցած հարցերը բացատրելով՝ հասկանալ և հասկացնել տալ ուրիշներին:

Սուբյեկտի և որյեկտի փոխհարաբերության ճիշտ վորոշումը հիմնականն եւ մի աշխարհայացք ըմբռնելու համար: Վորպեսպի իմանանք, թե Նալբանդյանն ինչ աշխարհայեցողություն ուներ, անհաժեղութեան եւ քննել այն հարցը, թե արդյոք սուբյեկտի՞ն, թե որյեկտին եր առաջնություն տալիս նա: Թ. Ավգալիբեգյանը, վոր նույնպես Նալբանդյանով և զրադվել, այդ տեսակետը չի բաժանում: Նալբանդյանին նվիրված նրա զրքյուկը, վորը լույս ե տեսել այս տարի (1928 թ.), ամբողջությամբ նվիրված ե Նալբանդյանի հարուցած տնտեսական խնդիրներին: Ավգալիբեգյանը գտնում է, վոր Նալբանդյանի «հայացքների դասակարգային վոգին» ըմբռնելու համար ընալ ել հարկ չկա կանգ առնելու նաև նրա փիլիսոփայական տեսակետների վրա: Դեռ ավելին: Բայ նրա՝ այդ «փիլիսոփայական տեսակետները» միայն «փոքր մանրամասնություններ են», վորոնք արժանի չեն ուշադրության (եջ 18): Այս, իհարկե, պատահականություններ: Ավգալիբեգյանի հարցադրման այդ յեղանակը սխալ ե և նրա պատասխանը՝ դիտավորյալ դասակիքի պատասխան: Յեզ իրոք՝

Նալբանդյանը, վոր ապրել ու դորձել ե զլխավորապես 19-րդ դարի յերկրորդ կեսի առաջին շրջանում, անպայմանուրեն աղդվել ե այդ շրջանի իշխող նեղափախական մտքից: Ֆեյերքախիզմը, վորը հակազդրվելով հեղելյան իդեալիստական փիլիսոփայությանը, հանդես եր յեկել, վորպես մատերիալիստական աշխարհայեցողություն, 60-ական թվականներին բազմաթիվ հետևողներ ուներ: Նա հետեւրդներ ուներ նաև Ռուսաստանում, հանձին Զերնիշեվսկու և մյուսների: Նալբանդյանը, վորի քաղաքական դասակարգային աշխարհայեցողությունը ձեավորվել ե զլխավորապես այդ՝ համեմատաբար տուժափոր հոսանքի ազգեցցության ներքո, իր փիլիսոփայական աշխարհայեցողությամբ անպայման յեղել ե ֆեյերքախի հետեւրդներից: Դեռ ավելին: Նա անգամ ծանոթ ե յեղել Հեղելի դիալեկտիկային և նույնիսկ վորձեր է

արել այդ ևս կիրառել իր զբական աշխատությունների մեջ: Յեթե Ավգալիբեգյանը կանգ առներ նալբանդյանի հարուցած փիլիսոփայական հարցերի վրա ևս և աշխատել նիւթ կերպով ըմբռնել այդ մեծ հեղինակի մտքերը, այն ժամանակ անպայման չեր կարող հանգել այն յեղակացություններին, ինչ վորներկա դեպքումն ե նա արել:

2

Վարդ դասակարգի, ավելի շուտ սոցիալական վարդ խավի իդեություն ե Նալբանդյանը: Ավգալիբեգյանը գտնում է, վոր «գյուղացիության»: «Ճայ հրապարակախոսը զյուղացիության խեղուգ ե հանդիսանում նույնիսկ այն ժամանակի, յեր խոսում ե վաճառականության ու արդյունաբերության զարգացման մասին» (ընդգծումը հեղինակին ե, եջ 78): Այս անպայման մասմբ ճիշտ եւ Մասամբ ենք ասում, վորովհետև Նալբանդյանն իրոք մանր բուրժուազիայի իդեությն եր, իսկ մանր բուրժուազիան միայն գյուղացիությամբ չի սպառվում ճիշտ ե, զյուղացիությունը հիմնական միջուկն ե, բայց և այնպես արհեստավորները, մանր վաճառականները և արդյունաբերողների վորոշ խավը նույնպես մանր-բուրժուազիայի շարքերին են պատկանում և նրանց վրայից թուչել չի կարելի:

1903 թ. յերբ մեր կուսակցության ծրագրի հարցն եր քնննավում, Գ. Վ. Պլեխանովը իր ներկայացրած նախազծի մեջ գրել վոր «արտադրության միջոցները և ապրանքների շրջանառությունը պատկանում ե իր քանակով փոքրամասնություն կազմող կապիտալիստ դասակարգին»: Պլեխանովը հողատերերին և մանր արտադրողներին մոռացության միջոցները պատկանուույն նկատել ե, վոր «արտադրության միջոցները պատկանում են վոչ միայն կապիտալիստ դասակարգին, այլև հողատերերին ու մանր արտադրողներին» (Соч. տ. V. изд. III. стр. 5): Քերին ու մանր արտադրողներին» (Соч. տ. V. изд. III. стр. 5):

Այս բանի համար իր ժամանակին շատերը լենինին առանձին համարում, բայց իրականում, և ինչպես դեպքերի առանձին համարում, բայց իրականում, և ինչպես դեպքերի հատակագործումը ցույց տվեց—այդ վոչ թե տառակերություն եր, այլ մատերիալիստական դիալեկտիկայի ճշգրիտ կիրառում: Անտեսելով հողատեր դասակարգին և մանր արտադրողներին, Պլեխանովը բանվար դասակարգին փաստորեն փակուղու արք եր գնում և կոնկրետ կերպով ցույց չեր տալիս, թե իր դասակարգային կովի ընթացքում ինչ վերաբերմունք պետք եւ ու

նենա պրոլետարիատն այդ սոցիալական խավերի նկատմամբ: Լեռնինը գրում եր, վոր հեղափոխական դասակարգի կուսակցությունը նման «մանր» խնդիրների գրայից լրակյաց անցնել չի կարող: Նա վորոշակի կերպով պետք ե իր վերաբերմունքը ցույց տա և բանվոր զասակարգին ասի, վոր գրանք ել շահագործողների շարուքին են պատկանում:

Ավգալիքնգյանը Նալբանդյանին միմիայն գյուղացիության րդեռող համարելով և մանր բուրժուական մյուս խավերի մասին հիշատակություններ չանելով, նույնպես խոշոր սիսալ և կատարում: Որինակ, այն հանգամանքը, վոր Նալբանդյանի «Յերկրագործություն» աշխատության մեջ գուշ կուշնեք և վոչ սակալաթիվ պարբերություններ նվիրված նաև վաճառականության ու արդյունաբերության զարգացմանը, Ավգալիքնգյանը միայն «ըստ յերեւյթին» հակասություն և համարում և այդ լուծում և, նրանով, վոր գանում ե, թե ոմի դասակարգի իդեոլոգ լինելու և կրօվիլու համար տնօնտես չի մըսս դասակարգերի գոյուրյունը բացարձակապես ժխտել» (Ընդգծումը հեղինակինն ե, եջ 80): Մեր խորին համոզումով այս միանգամայն սիսալ և և Ավգալիքնի բերած որինակներն ել հերքում են իրեն: Նա ասում ե, թե «անդիմացի, տոհմիկ լորդը, գերմանացի ազնվականն ու կամ ուսւ կալվածատերը յերեք չեն հերքել վոր ինդուստրիան նույնպես վորոշ արժեք ունի ժողովրդի տնտեսական կյանքում» (եջ 81): Բայց յերբ, պատամական վմր շըանում: Անա այս հարցն ե, վոր Ավգալիքնգյանն իրեն չի տաշխու և պատամական բոլոր շըաննիրի հարցին միենույն չափանիշն ե գործադրում: Այն ժամանակ, յերբ կապիտալիզմն Անդիմայում, Գերմանիայում և Մուսասամանում արդեն անտեսական խոշոր ուժ եր դառնել, յերբ նա ժողովրդական տնտեսության դեկն արդեն իրեն եր յենթարկում, աղնվականները, ինարկե, չեյին կարող ժխտել կապիտալիզմի վորոշ կենսարար նշանակությունը:

Կապիտալիզմի թե անտեսական և թե քաղաքական մըցությանը չդիմանալով, նրանք կուպրումիսի ողնությանն եյին դիմում և աշխատում գոնին այդ կերպ իրենց իրավունքներն ու արտոնությունները պահպանել: Այս ապացուցելու համար որինակների դիմելու հարկ չկա և ով վոր հեռվեհեռու ծանոթ ե անդիմական կապիտալիզմի զարգացման պատմությանը, այդ բանում դյուրությամբ կհամոզվի: Սակայն այն շըանում, յերբ ֆեոդալիզմը

խոշոր ուժ եր ներկայացնում իրենից, յերբ կապիտալիզմը գեռ նոր եր ծաղկման նշաններ ցուցադրում, միթե ազնվականը սիլի-բիլի յեր անում վերջինի հետ և ընդունելով նրա «գասակարգային գոյության իրավունքը» (եջ 80), հնարավորություններ, եր տալիս նրան զարգանալու: Բնավ յերբեք: Հայտնի յե, վոր ատելությունն այդ յերկու դասակարգերի միջն այնքան սուր կերպարանք եր ստացել վոր ազնվականը թեկուղ քաղցից մեռներ, իրեն թույլ չեր տա փողադրեր դասակարգի ներկայացուցչի հետ մեկտեղ սեղան նստել: Միթե նույնը չի կարելի ասել կայլածատքիրության հանդեպ բուրժուակասակարգի ունեցած վիրաբերունքի մասին: Անշուշտ, կարելի յի Թրանսական հեղուափության շրջանում ֆրանսական բուրժուազիան հանդես յեկավ վոչ թե ավատականության «գասակարգային գոյության իրավունքի» պահպանման, այլ իսպառ բացաման լողունկով: Մինչ հեղափոխությունը բուրժուազիայի իդեոլոգները ֆեոդալներին անաշխատ դասակարգ եյին համարում և միաժամանակ գտնութեմ եյին, վոր ով վոր չի աշխատում, չպետք ե ուտի: Ինչ ե սա. դասակարգային գոյության իրավունքի ընդունմաւ, թե բացասում ե, իհարկե, վերջինը:

Բայց մի բոպե ընդունենք, վոր Ավգալիքնգյանն իրավացիյի, ընդունենք, վոր ոմի դասակարգի իդեոլոգ՝ լինելու չի նշանակում «ուրիշ դասակարգերի գոյության իրավունքը» բա սել: Որինակ, բուրժուազիան մի դասակարգ ե: Բուրժուազիայի իդեոլոգը կանգնած լինելով իր դասակարգի շահերի տեսակետի վրա, միաժամանակ չի բացասում բանվոր դասակարգի գոյության իրավունքը: Բուրժուազիան իր դադարիաբախութ այդ դրագիրը գործադրում ե: Վորովինեալ ալրոլեատարիստը վորպես դասակարգ գոյության իրավունք ունի, հետեւաբար նա պահանջում ե, վոր բուրժուազիան նրան բարեկեցիլ վիճակի մեջ դնի (վորովինեալ նա դասակարգ ե), թույլ տա մասնակցելու պիտական ապարատի զեկավարության գործին, հավելյալ արժեքի բաժանմանը և այն և այլն, թեկուղ ելի իր շահը կապիտալիստի շահերին յենթարկելով, վերջինը կհամաձայնվի դրան: Ծիստուշ շահերի անդամ նման հարց տալ: Ցեթե բուրժուազիան թյուն կիմներ անդամ նման հարց տալ: Ցեթե բուրժուազիան ժարացաներ պրոլետարիատի վորպես դասակարգի գոյուրյուն իրավունքը, ինչ կասկած, վոր Մաքսի դասակարգային կովի թեորիան սխալ կիմներ, և ոեֆորմիստները (վորոնց թվում և Ավգալիքնիներ, և ոեֆորմիստները

բեգյանը) մեծ իրավունք կունենային Մարքսին (խելագար և
ավանտյուրիստ անվանելը Սակայն գաղանիքն ել հենց նրանումն
ե, վոր բուրժուազիան ժխտելով պրոլետարիատի վորպես
դասակարգի գոյության իրավունքը, միաժամանակ չի բացառում
նրա վորպես աշխատող և արտադրող մասսայի գոյության իրավունքը:
Աշխատող և արտադրող մասսան կապիտալիզմի համար կենսա-
կան անհրաժեշտություն ե, բայց իր իրավունքների համար
մարտնչող և կապիտալիզմի կործանման համար գոչինչ չխնատ-
յող դասակարգերի իրավունքների կամովին ընդունելը կապի-
տալիզմի համար վոչ միայն կենսական չե, այլ և նրա շահերին
դեմ ե: Միջազգային բուրժուազիան այսոր ձգտում և բանվոր
դասակարգին դարձնել աշխատողների անբան մի մասսա, այլ
կերպ ասած ձգտում և իրագործել իր իրեղորդների յերբեմնի
յերազները: Հերբերտ Սպենսերի, մասնավորապես Սիսմոնդիի
այն թեորիան, վորով նրանք հասարակությունը նմանեցնում
են մի կենդանի որգանիզմի, վորտեղ յուրաքանչյուրն իր փունկ-
ցիան ունի և Սիսմոնդիի խոսքերով ասած՝ պրոլետարիատը,
լինելով հասարակության վոտները յերբեք գլխի դեր կատարել
չի կարող, մեր ասածների լավագույն ապացույցն են: Ավել-
լեցյանի խոշորագույն սխալը կայանում և նրանում, վոր նա
դասակարգ ասած բանի մասին ճշգրիտ համկացողություն
չունենալով, միաժամանակ դրա վրա յե կառուցում իր ամբողջ
շենքը:

Դասակարգն անպայման անհատներից ե կազմվում, բայց
դա միայն ֆիզիկական անհատների մի սոսկական համախումբ
չե, այլ նախ և առաջ հասարակական մի կատեգորիա՝ հասարա-
կական արտադրական վորոշ հարաբերությունների գոյությամբ
պայմանավորվող. Այդ իսկ պատճառով դասակարգի գոյության
իրավունքը վոչ թե շրջափակվում ե նրա ֆիզիկական-տնաշնական
գոյության իրավունքով միայն, այլև միաժամանակ, և վորոն
ամենակարեղըն ե, յենթադրում ե նրա հասարակական սոցիալ-
տնտեսական, սոցիալ-քաղաքական դեր կատարելու գոյության
իրավունքը: Բուրժուական հասարակության մեջ վորոն խմբակ-
ցություն առանց այս վերջին խնդիրն առաջադրելու, յերբեք
վորպես դասակարգ ապրել ու գործել չի կարող: Յեթե այս ճիշտ
ե, իսկ այս անպայման ճիշտ ե, հետևաբար, սխալ ե Ավղալբե-
գյանի դասակարգի գոյության իրավունքի կամովին ճանաչու-

թյան թեորիան: Սխալ ե դա և այն պատճառով, վոր վոչ մի դասակարգ ինքնակամ կերպով իր իրավունքները, հոգուտ հակառակորդ դասակարգի, չի սահմանափակում: Կը կնում ենք, այդ հակառում ե դասակարգային կավի թեորիային: Պը լետարիատը, զորպես դասակարգ, իր գոյության իրավունքը ձեռք ե բերել կովով: Հետևաբար, սխալ ե Ավդալը եղանի այդ փաստարկումը: Բայց նա մի արգումենտ ել ունի:

Անցյալ տարի 60-ական թվականների հայաստանն ազելի քան
գյուղացիական յերկիր եր, վորտեղ առևտուրն ու արդյունաբերու-
թյունը չելին զարգացել: Նալբանդյանն այդ միջավայրի ծնունդ
եր: Յեկ վորովինեաւ «գաղափարները» բնածին չեն, «այլ միջա-
վայրի արքյունք», հետեւաբար նալբանդյանն ել գյուղացիության
իդեոլոգին եր: Կարճ դիմուգ: Բայց Ավդալբեգյանը չի նկատում,
վոր մի հակասությունից դուրս գալով՝ մյուսի մեջն և ընկնում
ժխտելով գաղափարների բնածին լինելու բուրժուական տեսակետը՝
ընդունում և բուրժուական մի այլ՝ միջավայրի թեորիան: Խըն-
դիրն ավելի պարզ կացուցանելու համար զիմենք հեղինակի մի
այլ գրվածքին, վորտեղ նա միջավայրի թեորիայի մասին ավելի
վորոշակի յե արտահայտվում: «Դանտեյին ու Գյոթեյին տարրեր
դարձնողը վոչ թե նրանց ընդունակությունների տարրերությունն
ե, այլ միջավայրի, հետեւաբար և այդ միջավայրի ազգեցության
տարրերությունն ես: «Միջավայրի թեորիան ճիշտ ե, վոչ միայն
գրական գործիչների, այլ ընդհանրապես բոլոր մատվոր արտա-
գրողների վերաբերամբ»: «Միջավայրն և վորոշչ պատճառը
վորեւ գեղարվեստական յերկի ու նրա հեղինակի համար»: «Այժմ
սոցիոլոգիան իր ամենակարևոր ներկայացուցիչների բերանով
հաստատում և վերջնականապես Տենի թեորիայի (միջավայրի
թեորիայի. Հ.) ճշտությունը»: Յեկ Ավդալբեգյանը մեջ և բերում
Պէխանովին. նա առիթ բաց չի թողնում Պէխանովի սխալներն
ոգտագործելու իր հականեղափոխական մտքերը հիմնադրելու
համար, բայց նա բնակ չի խօսում Պէխանովի մյուս մտքերի
մասին, վորոնք գալիս են հերքելու նրա տեսակետը: («Գեղար-
վեստ» № 3, 1909 թ., եջ 112—114): Որինակ՝ Պէխանովը գրում
ե.—«Տեսն արվեստի արտադրությունը բացատրում ե, յենելով
արվեստագետին շրջապատող միջավայրի հատկություններից:
Բայց ինչպիսի հատկություններից, հարցնում ե Պէխանովը.—
հոգեբանական, այսինքն տվյալ ժամանակի այն ընդհանուր հո-

երանությամբ, վորի հատկություններն իրենք են կարոտ բացատրության: Մատերիալիզմը տվյալ հասարակության կամ դասակարգի հոգեբանությունը բացատրելու համար, «յելնում և բարդուց՝ տնտեսական զարգացմամբ պայմանավորվող հասարակության կառուցածքից» և այլն: «Տեսր, վոր խթալիս եր, հաշտական նոգեբանուրյունը բացատրում եր յելնելով հասարակության կարգից և այդ պատճառով ել մոլորվեց անելանելի հակասությունների մեջ: «Տեսն այն մարդն եր, վորն ասաց Ա, բայց Բ արտասահնելու ուժ չունեցավ և դրանով ել իր սեփական գործը փչացըրեց» («Մարքսիզմի հիմնական խնդիրները»):

Կարծեմ տարբեր բաներ են ասում Պէտքանով ու Ավալերեանը: Յեկայն այսպիս են Ավալերեանի բոլոր փաստարկումները:

Ավալերեանն ասում է, թե Նալբանդյանը «Յանուսի պես յերկու յերես չուներ, վորսնցից մեկով մանր զյուղացիությանը ժպտար, իսկ մյուսով բուրժուազիային» (եջ 77): Բայց նա մոռանում է, վոր մանր բուրժուազիան ընդպրկելով արտադրուծում և այնպիսի իդեոլոգ, վորն ընդդրկում և տուաշնորդում և այդ բոլոր խավերի հիմնական պահանջները: Յեկայն մոռացությունը բոլում և նրանից, վոր Ավալերեանը, ինչպիս ասացներ, մանր արտադրողներին և առերտականներին անտեսել ե:

Նալբանդյանը լինելով մանր-բուրժուազիայի իդեոլոգը, առաջարված հարցերի լուծման մեջ անպայման հակասուրյունների մեջ և ընկնում և այդ բղիում և նրա պատկանած զասակարգի կեցությունից, վորը վոչ թե պիտք և անտեսել, այլ աշխատել բացատրելու: Նալբանդյանը փառարանելով յիրկապործությունը և դրա հետ միասին չժխտելով վաճառականության և արդյունաբերության դերը, վոչ թե ձգտում եր վերջիններին առաջինների աղախինը դառնել, ինչպիս այդ կարծում և Ավալերեանը, այլ պարզապես նա զբսերում եր դասակարգի ձգտումները: Փրկության յելքը մանր արտադրության մեջն ե, և Նալբանդյանը գանգատվում և անզիփական ձեմ արտադրությունից հենց նրա համար, վոր նա խոշոր և և կլանում և մանր արտադրողներին, նույն միտքնե արտահայտում և այն ժամանակ, յերբ խոսում և Փրանսական հեղափոխության արդյունքների մասին (յերկ. ժաղովածու, հ. 2, եջ 320—324):

3

«Նալբանդյանը ծովովրդի հարստության վերաբերյալ հայացբներով մի տնկանածելի մերկանտիկիս ե» (եջ 106): Մենք ել այն կարծիքին ենք, վոր նա նման հոգեբով տարվել ե: Բայց չե՛ վոր ըստ Ավալերեանի Նալբանդյանը զյուղացիության իդեոլոգն ե, իսկ մերկանտիկիզմը, ինչպես պիտենք, հատուկ և առետրական բուրժուազիային: Ավալերեանը այս հակասությունը լուծում ե շատ հասարակ ձևով: Վորովինու «...յուրաքանչյուր իդեոլոգիա կարող և անցնել դասակարգից-դասակարգ», (եջ 107) դրա համար ել մերկանտիկիզմը վոգնորել և և մանր զյուղացիությանը:

«Երևանի Յեկայն մերկանտիկիզմն առաջարեց և յեկել իրեւ տակարգական բարձուազիայի իդեոլոգիա: Մինչդեռ նուսասամենում նույն ուղղությունը հանդիս և յեկել իրեւ կալվածաւեր աղեղականության իդեոլոգիա: Անզանում, բնիհակառակը, մերկանտիկիզմը փառաբանվել և իրեւ զյուղացիության բարզությանը նպաստելու մի միջոց» (եջ 113): (Ընդգծումները հեղինակին ե): Շատ բարի, ես ինչու մերկանտիկիզմը Ռուսաստանում հանդիս չեկավ, յենթագրենք թե իոհան Գրողնու ժամանակ: Չե վոր այդ շրջանումն ել կալվածատեր աղնվականներ կային: Այս հարցի պատասխանը Ավալերեանը տալ չի կարող, այն պարզ պատճառով, վոր իդեոլոգիաները յերկեք ել մի դասակարգից մյուսին չեն անցնում, այնպիս ինչպես նա յեկարծում և մերկանտիկիզմն ել ինչպես մի իդեոլոգիա վոչ թե մի դասակարգից մյուսին և անցնել, այլ նա հանդիս և յեկել այն յերկրներում և այն ժամանակ, յերբ արդեն առետրական բուրժուազիան ավլալ յերկրի տնտեսական կյանքում իր ներկայությունը զգացնել և տիկել: Իոհան Գրողնու ժամանակ առետուրը Ռուսաստանի տնտեսական կյանքում այն դերը չեր խաղում, ինչ Պետրոս Մեծի ժամանակ: Պետրոս Մեծի որոք սուսական առետրական բուրժուազիան արդեն տնտեսական խոշոր ուժ եր, և դրա համար մերկանտիկիզմը հանդիս և զալիս վոչ թե իոհան Գրողնու, ել մերկանտիկիզմը հանդիս և զալիս վոչ թե իոհան Գրողնու, այլ Պետրոս Մեծի որոք: Նույնը և Հայաստանի մերաբերյալ 1840—ական թվականներին առետրական բուրժուազիան մեղանում այն ուժը չուներ, ինչ 60-ական թվականներին և այդ և պատճառը, վոր մերկանտիկիզմի մասին խոսք և բաց անում վոչ թե Արովյանը, այլ Նալբանդյանը: Հետևարար, Ավալերեանի

փոխանցման թեորիան ել հիմնովին սխալ լինելով, միանգամայն ռեալիզմին եւ կ դարձ եւ դնելի իդեալիզմ:

Բայց ներեցեք, Ավղալբեգյանը դեռ փաստարկումներ ունի, նա ասում է, թե ճիշտ այնպես, ինչպես «բույսի մի գոտուց մյուս գոտին անցնելը վոչ միայն չի հակասում բնապատմական հիմնական ճշմարտությանը, թե յուրաքանչյուր գոտի ունի հատուկ բուսականություն, այլ ընդհակառակն, անհերքելի կերպով հաստատում ենույն թերը... Ճիշտ նույնալիսի յերկույթական հակասություն ու իրական հաշտություն գոյություն ունի նաև իդեոլոգիական աշխարհում» (հջ 106-107): Զեղով ասաց, վոր այդ այլպես եւ Զբարյանության որենքները նույնությամբ յերբեք չի կարելի հասարակության վերաբերմամբ կիրառել և յերկրորդ՝ վորտեղ ե գրած, վոր իդեոլոգիաների պատմությունը ձեր տսածն ե ապացուցել և վոչ թե հակառակը: Սակայն մենք մի պահ մոռացնք, վոր գործ ունենք եկեղեցիկ մի մարդու հետ, վորին ամեն բան ներելի յե:

Այսպիս, ուրեմն, Ավղալբեգյանն իր հիշյալ դատողություններով կատարում ե յերկու սխալ ես. նախ՝ բնության որենքները նույնությամբ հասարակության վերաբերմամբ կիրառելով բնության և հասարակության մեխանիստական ըմբռնման և հանգում և յերկրորդ, լսելով պատմական յերկույթների կրկնության մասին՝ փաստապես վուլգարիզացիայի յե յենթարկում այն և դրանով ել արջի ծառայություն մատուցում գործից անտեղյակ ընթերցողին:

Առաջին սխալի վրա, վորը նա արել եւ 16-րդ եջում, դժբախտաբար կանգ առնելու հնարավորություն չունենք, վորովհետև այդ մեր ծրագրից դուրս եւ մեզ հեռու կտաներ, Նկատենք միայն, վոր բնական և հասարակական յերկույթների բաղդատության ժամանակ հասարակական կյանքում մարդու, վորպես սուբյեկտի, խաղացած դերը հիմնական ե, վորը չպետք ե անտեսել առավել ես, յերբ խոսքն իդեոլոգիաներին և վերաբերում:

Դառնանք յերկրորդ սխալին: Ավղալբեգյանն ասում է, թե մի «իդեոլոգիա կարող ե անցնել դասակարգից դասակարգ», և նա դրա համար վկայության եկանչում իդեոլոգիաների պատմությունը: Իդեոլոգիաների պատմությունն ապացուցում ե, վոր յեթե մատերիալիզմը՝ վորպես փիլիսոփայական ուղղություն հանդես

ե յեկել Դեմոկրիտի, ապա Սպինոզայի, Հոլբախի, Հելվեցիի, հետո արդեն ֆեյերբախի, Մարքսի և Ենգելսի մոտ, դրա համար յեղել են անհրաժեշտ նախապայմաններ: Մատերիալիզմը Հոլանդիայում և Ֆրանսիայում յեղել ե իր ժամանակի հեղափոխական բուրժուատ դասակարգի աշխարհական արդեն հականեղավար նախական գառել, պրոլետարիատն ե, վոր մատենադարձությունը հին Հունաստանում Պլատոնի, միջին ռարերում պատի, իսկ մեր որերում արդեն բանկիրների և կարտեների նախագահների լոգունգը չե: Զբարյան բանկիրներն ել տարբեր դասակարգի ներկայացուցիչներ են: Վոր հիշյաներն յերբեր դասակարգի ներկայացուցիչներ են: Ինչպես յեղավ, վոր մերկանտիլիզմը մի տեղ առևտրական բուրժուատի մասունքը յերբ նա արդեն հրապարակ գալով վորպես պրոլետարիատի մոտ՝ յերբ նա արդեն հրապարակ գալով վորպես պրոլետարիատի մոտ՝ յերբ նա արդեն հրապարակ գալով վորպես պատմակարգ, սկսեց իր սեփական կուլտուրան կառուցել ինչնու գասակարգ, սկսեց իր սեփական կուլտուրան ինչնու մատուները բուշեն, իբրենը և մյուսները չեղան: Ուսականիզմը գրոշակակիրները ներկայացուցիչներ եյին: Զբարյանը սարբեր դասակարգերի ներկայացուցիչներ եյին: Վոր նրանք տարբեր դասակարգերի ներկայացուցիչներ եյին:

Վերցնենք մի այլ որինակ: Ռեալիզմն, արվեստի մեջ, վորպես հեղափոխական մատերիալիստական ուղղություն, վորպես հեղափոխական դաստերիալիստական ուղղություն, վորպես ֆրանսիայում հանդես յեկար այն ժամանակի, յերբ Ֆրանսիայում հանդես յեկար այն ժամանակի, յերբ մզում ավատականության դեմ, իսկ բուրժուազիան պայքարը եր մզում ավատականության դեմ, իսկ բուրժուազիան պայքարը մոտ՝ յերբ նա արդեն հրապարակ գալով վորպես պրոլետարիատի մոտ՝ յերբ նա արդեն հրապարակ գալով վորպես պատմակարգ, սկսեց իր սեփական կուլտուրան կառուցել ինչնու գասակարգ, սկսեց իր սեփական կուլտուրան ինչնու մատուները բուշեն, իբրենը և մյուսները չեղան: Ուսականիզմը գրոշակակիրները ներկայացուցիչներ եյին: Զբարյանը սարբեր դասակարգերի ներկայացուցիչներ եյին: Վոր այսեղ ինչ վոր մի բան կա և այդ բանն ե ահա, վոր Ավղալի մեջ հասկացել: Պատմական յերեսույթներն անպայման դարերեցյանը չի հասկացել: Պատմական յերեսույթները, Ռիկկերտը և մյուսներն անպայման կրկնվում են: Վիկտորանդը, մերկանտիլիզմը ուսւու ազնվականության սխալ են: Բայց յերբեք մերկանտիլիզմը ուսւու ազնվականության սխալ են: Բայց յերբեք մերկանտիլիզմը ուսւու կարող, վորովհետև գեոդալների դասակարգիան դասուալ չեր կարող, վորովհետև գեոդալների դասակարգիան ասել ե թե առևտրական բուրժուատի շահը մերկանտիլիզմին, ասել ե թե առևտրական բուրժուատի շահը մերկանտիլիզմին, ասել ե թե Ավղալբեգյանը չի ըմբռնել այն ժուաղիայի շահին, հակադիր ե: Ավղալբեր Պետրոս Մեծի որոք «աղելեմնատար հանգամանքը, վոր յեթե Պետրոս Մեծի որոք «աղելեմնատար հանգամանքը, վոր առևտրական բուրժուատազիան սերվել ե նաև ազնվական ե, վոր առևտրական բուրժուատազիան սերվել ե նաև ազնվական ե,

դասից: Յեղրակացությունը պարզ է.՝ մերկանտիլիզմն ամենու ընթացք առևտրական բուրժուազիայի իդեոլոգիան և յեղել: Իդեոլոգիաները յերեք դասակարգից գասակարդ չեն անցնում այնպես, ինչպես Ավգալբեգյանն և կարծում: Դիալեկտիկական մատերիալիզմը պըոլիտարիատից բացի ուրիշ վորեւ դասակարգի աշխարհայցողությունը չի յեղել և չի ել կարող լինել: Այն հանդամանքը, վոր իդեոլոգիաների ձևի (վոչ լիովին) փոխանցում և կատարվում և այդ ձևի մեջ ժառանգորդը նոր բռվանդակություն և դնում, Ավգալբեգյանի փոխանցման թեորիայի վոչ թե հիմնավորումը, այլ բացասումն է, վորովհետև վերջինն անտեսելով յուրաքանչյուր գաղափարախոսության առաջացման համար պահանջվող անհրաժեշտ նախատվյալները և մերանիկութեն բուսական աշխարհի որենքները հասարակական յերեւոյթինը վերաբերյալ կիրառելով՝ փաստորեն հանգել և ապադասակարգայնության թեորիային: Ճիշտ է, նա նախադպուշացում կատարում և այդ մասին: Բայց այլ և սուրբյեկտիվ ցանկությունը, այլ և որյեկտիվ հետևանքը: Այն հանդամանքը, վոր նույնվերապահորեն մերկանտիլիզմն առևտրական բուրժուազիայի և աղնվականության ինչպես և զյուղացիության գաղափարախությունն և համարում, ինքնատինքյան տվյալ հարցի վերաբերմամբ ապադասակարգային մուեցում ունենալն և ապացուցում:

«Նալրանդյանի ազգության վերաբերմամբ ունեցած հայացքի մեջ զնուն և համակրելի կետը. այս, վոր նա հակառակ և բռնացող հափշտակող ազգությանը» (հի 52):

Ճիշտ ե, չի կարսղ և իրավունք ել չունի մեկն ուրիշն հարկադրել, վոր նա այս և վոչ թե այն գաղափարին ծառայի: Յուրաքանչյուրն այս կամ այն հեղինակի մեջ վորոնում է այնպիսի գաղափարներ, վորոնք իր սրտին ավելի մոտ են և իր համար ել ընդունելի: Այդ տեսակետից Ավգալրեզյանն անպայման իրավունք ունի Նալբանդյանի՝ ազգության մասին ունեցած հայացքի մեջ վորոնել իրեն համակրելի կետեր և այդ համարել այն, ինչ վոր իր ձգումներին ավելի յեն մոտիկ: Հանրածանոթ իրազություն ե, վոր մենշերիկներն այժմ ամենուրեք ազգային գաղափարի ջատադրվներ են և Ավգալրեզյանն ել, վորպես մենշերկ դրանց վորում բացառություն չի կազմում: Բայց կարեորն այդ չե, այլ

այն, վոր Ավգալիեկյանը մեծ խնամքով թագցել և Նալբանդյանի ազգության մասին ունեցած հայացքի հեղափոխական կետը, դրա փոխարեն առաջ ե քաշել իր համակրելին:

Դեռ հոգվածի սկզբում մենք ասել ենք այն մասին, վոր Նալբանդյանը վոչ միայն Փեյքը բախյան հոսանքի աղղեցության տակ եր գտնվում, այլ և նա ծանոթ եր հեղելյան դիակեկտիւկային։ Յեղ ահա Նալբանդյանը, հակառակ բուրգուանացինալիստներին, աղգության գաղափարը վոչ միայն չի սրբացնում և դիմ ե աղգությունն աղգության համար հարցադրմանն ու լուծմանը, այլ և նա վերտաշիբորեն կանգնում և պատմական աւելակեափ վրա։ Ազգերը միշտ չեն յիշել։ Նրանք հանդիս են յեկել պատմության ընթացքում և հայունի յին «իբրև պատմական իրողություններ» (յերկերի ժողովածու հ. 2, էջ 361)։

Այս ժամանակ, յերբ աղջեր չկային, «կայրն ատըլիկ» (Եջ 361—362): Պատմության ընթացքում բազմաթիվ աղջեր են յեկել, մենել և գնացել, բայց մարդը մնացել է: «Փյունիկեցիները յերիացին» վորպես աղջ և փյունիկեցի և փյունիկեցի վերջացան», «Աղջը կդա և աղջը կերթա—ասում ե բանաստեղծ թագավորը: Իսկ մարդը հավիտյան կա—կցորդում ենք մենք»: «Զքացած աղջն ապրում ե իր ժառանգների մեջ, առաջացած նոր աղջը վազուց ապրում եր իր նախահարց մեջ»: «Զքացող, մեռնողը... աղջությունն ի», իսկ մարդը միշտ ել մնում է կինզանի (Եջ 363):

յենթարկելով՝ իր դասակարգի շահն և առաջադրել։ Տիրող դասակարգերի և աշխատավոր մասսաների շահերի միջն խոշոր անջըր-պեաներ կան և վորպեսզի այդ անջըրպեալ մասսաների համար նկատելի չլինի և նրանք տիրող դասակարգի դեմ դուրս չգան, վերջինները մեծ վարպետությամբ ուղարկությամբ են մղգության դաղափարը առաջիններին խարելու, նրանց դասակարգային գիտակցությունը մթազնելու համար։ Շատ միամիտներ կարծում են, թե վաս և միայն յենթարկվող աղղությունների վիճակը, վոր միայն վերջիններն են, վոր անասելի կերպով տանջվում են տիրողների կողմից։ Սխալ և այդ, Նալբանդյանը դրա հետ համաձայն չե և ասում ե, թե անգամ «այն մարդիկ, վորոնց աղղությունը դողացնում է յերկրագունդը, բևեռից մինչև բեն, սարուկ են յուրյանց կառավարության ձեռքում։ Կառավարությունը նկատելով, վոր այդ աղղութը (կարդա աշխատավոր մասսաները. Հ.) ինքյանք յուրյանց մեջ ազատ չեն տակավին, նկատելով, վոր սնոտի նախապաշարությունները, փատած սկզբունքները և առնասարակ, ոլխիվայր հասկացողությունք պաշտելի յեն նոցա, խորամանկությամբ ողուտ են քաղում նոցա թուլությունից, տիրում են նոցա վրա և նոցա անունով գործում են միմիայն յուրյանց անձնատպահության համար» (Եջ 367)։ Միթք նույնը չեյին անում և դաշնակցականներն իրենց 2 և կես տարվա տիրապետության ընթացքում։ Ոգտագործելով հայ աշխատավորության անունը, նրանք բնածինչ եյին անում թյուրք աշխատավորներին և զրանց ու հայ աշխատավորության ընթացքում։ Ոգտագործելով հայ աշխատավորության անունը, նրանք բնածինչ եյին անում թյուրք աշխատավորներին և զրանց ու հայ աշխատավորության ընթացքում։ Ոգտագործելով հարաբեկան հարաբեկան տիրությունները, նարստությունները և դիզում։ Բնական և, անպայման, վոր Դաշնակցությունն արդարացնող Ավագլեբեգյանն այս ամենի մասել չեր կուրող։ Բայց դառնանք Նալբանդյանին։

Կառավարությունները, վորոնք անպայման տիրող դպասակարգերի կազմակերպություններ են, մինչև ուր կարողացել են մասսաներին խավարի մեջ պահելով՝ ուղարկործելիքնեց սեփական փառքի և հարստության կուտակման համար։ Նրանք իրենց տարած ճաղթություններով վոչ թե աշխատավորների՝ Նալբանդյանի խոսքերով ասած, աղղության դրությունն են բարելավել, այլ իրենց զիզգած հարստության մեջ միայն «գրոշի փառք» և ասել՝ «Ճնծա աղզ»։ Բերանդ հովին բացած նայիր այն կառը լաթին, վոր

կախված ե ձողի վրա»։ Յեկ յեթե այդ «ազգը» համարձակվել ե ասել, թե այդ «կտոր լաթն ինձ կերակուր չի տալիս», կառավարությունները նրանց քննցնելու համար նկատել են։ «Յեկ Բնչ հարկավոր ե քեզ կերակուր, յերբ դու ապրում ես այդ փառքով» (Եջ 369)։

Ճիշտ և, անպայման, վոր Նալբանդյանը հասարակական կեղեքվող խավերի, դասակարգերի փոխարեն գործ ե ածում աղղություններու տերմինը, տիրող դասակարգերի փոխարեն՝ կառավարություններ։ Նա դեռևս հատուկ գաղափար չունի դասակարգային կովի մասին։ Նա բանվոր դասակարգի իդեոլոգը չե և լինելով մանր բուրժուազիայի գաղափարախոս՝ իր մտքերի լինելով մանր բուրժուազիայի մեջ բավականաչափ տարտամ ե, բայց այնուամենայնիվ նա վորոշակերպեն ծառանում ե խոշոր բուրժուազիայի և հողատերերի դեմ։ Նա պարսպանում ե նրանց նացիոնալ նշանը և նշանը կուր այն, վորովհետեւ այդ ազատամիրությունը լիզմը, նշանը կուր ապգի աշխատավոր գյուղացիների և մանր արտադրողների բարությանը, այլ տիրող դասակարգերի իմպերիալիստական նոպատակներին։ Ծանոթ չի են գիտական սոցիալիզմին և գաղափար չունենալով պրոլետարիատի դասակարգային կովի մասին, Նալբանդյանը, անշուշտ, բիատի դասակարգային կովի մասին, Նալբանդյանը, նացիոնալիզմը պակաս չի իմանում, վոր մանր բուրժուական նացիոնալիզմը պակաս կծու և աղետաբեր չե բանվորների և աշխատավոր գյուղացիների համար։ Այնուամենայնիվ Նալբանդյանը զիտակցում ե, ցիների համար։ Անգլիայի լորդերի ու բանկիների նացիոնալ վոր ամենակարող Անգլիայի սեփական կուլիների, ճնղիկ սեփական կուլիների, լիզմը վորքան վնասաբեր և չին կուլիների, ճնղիկ սեփական կուլիների, հողազուրկ գյուղենքան աղետաբեր և Անգլիայի բանվորի, հողազուրկ գյուղենքան աղետաբեր այդ նացիոնալիզմը և առաջարկում ե հրաժարվել, նույնու կուր և այդ նացիոնալիզմը դեմ վաղափարի դեմ, վարով իշխող դասակարգերը նիսկ կովել այդ գաղափարի դեմ, վարով իշխող դասակարգերը մասսաներին մթրեցնում են շահագործելու համար։

Կրկնում ենք, Ավգալիկյանը մեծ խնամքով թագցնում ե Նալբանդյանի աղղության մասին ունեցած հայացքի այս հեղանական կուտակման վարպետությանը՝ Դաշնակցությանը, վորի հետ նա այտական կուտակման գաշնակցությանը մեջ և:

սոր գատական գաշնակցության մեջ համար կառը լաթին, վոր

Դեռ հոգվածի սկզբում ասացինք, վոր Ավղալը եղանը Մ. Նալբանդյանի փիլիսոփայական հայայքների վրա կանգ չէ տակը Նա այդ, ինչպես և աղջության մասին բերած հեղափոխական մտքերը, համարել եւ մանր և հիշատակության վոչ արժանի կետեր, վորոնց անտեսումն ել առանձին, ըստ նրա, միասակար գործ չի Նալբանդյանի ամբողջական գեմքը պարզելու համար: Առասարակ, հեղափոխության զետ գնացող յուրաքանչյուր անձնավորություն, աշխատում են հեղափոխական մտքերից, դրանց ճշգրիտ մեկնարանությունից խուսափել: Ավղալը եղանը, վորպես արդպիսին, դիտակցութիւն խույս և տվել Նալբանդյանի Փեյնըրախյան մտանքին:

Ինչպես հայունի յեւ, Ֆեյնըրախն իր հախարդների համեմատությամբ առաջինն եր, վոր ճշշտ և վորոշակի կերպով գրեց և լուծեց սուբյեկտի և որյեկտի փոխնարարերության հարցը: Հիմք ընդունելով սպինոզյան մատերիալիզմը, Ֆեյնըրախն այն անձնավորությունն եր, վոր ապացուցեց, թե ամենուրեք առաջնությունը վոչ թե սուբյեկտին, այլ որյեկտին և պատկանում ու դրանով մահացու հարված հասցրեց իդեալիզմին: Նալբանդյանը, վոր ապրել և գործել եւ հենց այն շրջանում, յերբ Փեյնըրախիդմը տիրապետում եր, անպայմանուրեն աղդվել և դրանից:

Մի ժամանակ մարդիկ կարծում եյին, «թե փիլիսոփայության աթոռը գրված և ողի անշտափելի ատարածության մեջ»: Այդ մարդիկ անպայման «պարզամիտներ եյին» և չիյին կարող գիտակցել, վոր այդ ամենը սուտ ե, և փարթամ ապրող ներկայացուցիչներն եյին, վորոնք «խորամանկությամբ աիրելով մարդկային բանականության», նրան «յեզիւտական առեղծվածներով պատգամներ եյին տալիս» ու հավատացնում, թե բանականությունն ե ամեն ինչի սկիզբը: «Սուտ ե, փիլիսոփայությունը յերկրագնդի վրա յեւ, մարդն ենրա աթոռը, մարդն ենրա և քըննողը և քննելին»: Այս, ինչ, մինչեւ որս ասել են վոգու և նրա գերի մասին, մի չարամիտ խարերայություն ե յեղեւ: Մարդը փիլիսոփայությամբ և զրադպում վոչ թե վոգիներն ըմբռնելու, այլ իր սեփական ընությունը հասկանալու համար: «Մարդն ե փիլիսոփայության և քննողը և քննելին»: Բայց ինչ ե մարդը, ինչից ե կազմված նա: «Վոդին մարմին և վուլությունը եւ մարդն մարդին ասում են, թե մարդը բարոյական եյակ ե, նա բարոյականություն ունի, և չի կարելի նրան մտաերիել մի գույշ համարել, վոր վոչ մի գգացողություն ու բարոյականություն չունի:

Կ Նալբանդյանը: «Առանց մարմնի չկա կենդանի, շոշափելի կենդանություն, իսկ մարմինը նյութ ե և մարմնի և մարդու կյանքը նյութերի անդապար փոփոխություն եւ: Բայց չե, վոր իդեալիստներն ասում են, թե մարդը բարոյական եյակ ե, նա բարոյականություն ունի, և չի կարելի նրան մտաերիել մի գույշ համարել, վոր վոչ մի գգացողություն ու բարոյականություն չունի:

Նալբանդյանն այդ հանդամանքը չի բացասում, բայց նա նկատում ե, վոր «մարդը նախ և առաջ կենդանի յն և ապա բարոյական եյակ»: Հենց դրա համար ել այն հարցին, թե ինչի՞ կարուտն ե վոր մարդն ամենից շատ և քաշում, Նալբանդյանը պատասխանում ե՝ «Նյութի»: «Մարդը առաջ, քան թե պիտի գոյացնաւուց հետո պիտի ապրի, առաջ քան թե պարագայուց անձը, յուր կյանքը, յուր անցածը, յուր ներկան, և առաջ, քան թե պիտի մատծե և հողաբարձու լինի յուր ապացայի մասին, այս բոլորից առաջ մարդը կարուտ ե նյութի»: Յեթե մի ժամանակ «մշուշով պատած մարդկային յերեակայությունը վոչնչից տիեզերք եր ստեղծում, այսոր այդ հարցավոր չե, այդ ժամանակներն անցան, այսորվա մարդը կրկնում ե, կուլտուրական, նա այլևս չի հավատում այդ սնութիապաշտումներն և մեր արդի «վերջին մանուկն ել մեղ հետ կրկնում ե ԵԽ ոիհի ոիհի մի» (հջ 347):

Միթե Ֆեյնըրախը չեր, վոր մատերիել մարդը տիեզերքի կենտրոնն եր համարում: Նալբանդյանն ել հիմնականում Փեյնըրախիան հումանիզմն և զարգացնում փիլիսոփայության մեջ:

Հիմք ընդունելով մատերիան, Նալբանդյանն այդ չի գնում քարացած վիճակի մեջ, նա այն կարծիքին ե, վոր շարժողությունը նյութի հատկանիշն ե: «Կյանքն ե անդապար շարժողություն, նյութերի անդապար փոխանակություն և անձնապահություն» (հջ 364): Ի՞նչ ե նշանակում գործեր, գործունեյություն ունինալը, Նալբանդյանը պատասխանում ե: «Գործունեյությունը շարժողության հետեանք ե, առանց շարժողության չկա գործունեյություն: Ուր չկա գործունեյություն, ասել ե չկա շարժողություն, իսկ ուր շարժողություն չկա, այսուղե կյանք չկա»: Դեռ այսոր եւ քիչ չե այն մարդկանց թիվը, վորոնք կարծում են, յեթե կորչում եւ քիչ չե այն մարդկանց թիվը, վորոնք կարծում են, ապա նա մաշտերիան շարժվում ե, գործունեյության մեջ ե, ապա նա մաշտերիան շարժվում ե, գործում ե կորչում ե: Ինչու բնական շատ յերեսույթներ մեկ վում, հալվում ե կորչում ե:

ել տեսար չքացան։ Բարի քրիստոնյան սրբան պատասխանում եւ, վոր բույսը, կամ թէ մի այլ մարմին մաշվեց և վոչնչացավ և բնությունն որը հաղար նման կորուստներ ունի։ Սակայն, Նալբանդյանը կտրականապես դրան պաստասխանում եւ վոչ, «բնությունը կորուստ չունի» (եջ 356)։ Այն, վոր արտաքին ուժերն ազդում են եյակի վրա, կազմալուծում նրա որգանիկուր, այդ նյութի կորուստ չե, այլ պարզապես նշան և նրա, վոր «եյակի կազմվածքի մեջ մտած նյութերը լուծվելով կազմվածքից, շարունակում են յուրյանց կյանքը կազմելով մի այլ եյակ, կամ իրեն նյութ պիտոյանում այլ եյակին» (եջ 364)։ Այս բոլորն անկասկած փեյերբախյան և վոչ թե մարքսյան մատերիալիզմ եւ, այսինքն Նալբանդյանի բերանով խոսում ե հայացողական, բայց վոչ յերբեք դիալեկտիկական մատերիալիզմը։ Այդ պատճառով ել բնավի զարմանալի չե, վոր Նալբանդյանը ևս չի կարողանում ազատագրվել իդեալիզմի գերությունից։

Այսպես, որինակ, այն հարցին, թե յերբ և մարդու բարոյական, Նալբանդյանը պատասխանում է. — այն ժամանակ, յերբ «գիտակցությունը և համերաշխությունը նրան դրել են այն կետի վրա, վոր նա այլևս հանցանքներ հղանալ չի կազող» (եջ 384): Այս, ինարկե, զուար իդեալիստական մոռեցում և ինսդրին, վոքով հետև նախքան մարդկանց բարուական դարձնելը, նրանց բարձր գիտակցության մասին խոսելը, պետք և խոսել այդ գիտակցությունը պայմանավորող մատերիել հիմքի փոփոխման մասին, վորը ներկա գեավորմ Նալբանդյանը չի անում: Յեվ ընդհանրութես Նալբանդյանին զարյուն մատերիալիստ և դիալեկտիկ համարել, այդ պարզապես տղայանառությունն է: Յերբ մենք Ավդարենդյանին մեղադրում ենք, վոր նա Նալբանդյանի փիլիսոփայական հայացքների վրա կանդ չի առնում, այդ վոչ թե նրա համար ե, վոր մենք պահանջում ենք, վոր նա չեղյան արդացուցեր, վոչ, այլ նրա համար, վոր նա մոռացության չտար Նալբանդյանի նաև առաջադիմ մոքերը:

Նալբանդյանը լինելով մանր-բուրժուազիայի գաղափարախոսը, նա միաժամանակ իր շրջանի ամենախոշոր հայ գետքն է։ Նրանով զբաղվողը պետք է հաթասարապես կանգ առնի նաև նրա հեղափոխական մտքերի վրա, վորոնք գեռ այդ ժամանակ մերժելի յեն յեղել հայ բուրժուազիայն և ցույց տա, թե ինչպես նույն ուրժուազիան խորշում է հեղափոխական խոսքիցն ու զոր-

Ճից: Նալբանդյանի պիտական ուսումնասիրությունը վորչե իգեա վրդմը հիմնավորելու, կամ նացիոնալիզմը փառաբանելու մի միջոց պիտի լինի, այլ մի միջոց, վորով ուսումնասեր մարքսիստական միտքը նոր հարվածներ պիտի հասցնի իդեալիզմին և թթու շովինիզմին, վորը մեղանում գլուխ և բարձրացնում: Ավգալը բեզյանն այդ չի արել, նրա ուսումնասիրությունը մեզ համար ընդունելի ուսումնասիրություն չե (և չեր ել կարող լինել), դրա համար ել մենք գտնում ենք: Վոր Նալբանդյանի մարքսիստական ու բազմակողմանի ուսումնասիրությունը նոր ե, վոր պիտի կատարվի:

Ավդալբեզյանը Մ. Նալբանդյանի մասին գրած իր գրքույթ-կում սխալ ե դնում և լուծում նաև մի շարք տեսական այլ հարցեր։ Այսպես, որինակը նա կարծում է, թե անտեսական փազերի պարբերացման համար յելակեան արտադրողական ուժերից անջառապարբերացման համար արտադրական հարաբերություններն են (եջ 87)։ Այս վերցրած արտադրական հարաբերություններն են (եջ 87)։ Այս ի՞նարկե, կատարյալ խեղաթյուրում ե, վորը նա կատարել ե և իր կ. Մարքսի անտեսական զարդացման թեորիայի մասին գրած բրուշուրում։ Վոչ թե արտադրողական ուժերից անջառապարբերացման հարաբերություններն են պարբերացման հիմք, այլ այդ դրական հարաբերություններն են պարբերացման հիմք, այլ այդ յերկուուր միասին վերցրած, վորովհետեւ նրանք մի անբաժան միասնական ամբողջություն են կազմում։

Սի այլ տեղ Ավրալլենդյանն ասում է. «Ծոթով զատ բախա-
ներ, վրոնք ուսուպիստական չեն, բայց նրանց հասնելու համար
առաջարկված անիբազործելիք միջոցների պատճառով, նրանք դառ-
նում են ուսուպիստական» (եջ 48): Հարցն այդ կերպ դնել մեր
կարծիքով հիմնովին սխալ է, վրույնիտև միջոցներն առաջադրը-
վում են համաձայն նպատակների: Իսկ յեթե իրոք, մեկի կող-
մից առաջարկված միջոցներն ուսուպիստական են, դրանով տրվ-
յալ իդեան ուսուպիստական չի գտնում, այլ պարզապես նշան է,
վոր նպատակի և միջոցի մեջ հակասություն կա և կամ թե, վոր
այդ միջոց առաջարրողը պարզապես հրաժարվել ե սկզբնական
նպատակից: Որինակ, գիտական սոցիալիզմի իրականացման հա-
մար Ա ինտերնացիոնալի այսորվա առաջարկված միջոցները
ընդունելի չեն, գորովհետև այդ միջոցները բղխում են սոցիալիզ-
մի նրա բուրժուատական ըմբռնումից: Բայց կարեկ՞ յե արդյոք դրա

1 Уже в мае 1945 года в Краснодаре состоялся первый областной съезд народных депутатов Краснодарского края.

հիման վրա դիտական սոցիալիզմն ուստուիրա հայտարարել։ Փաստերը համենայն դեպս, այդ բանը հերքում են, վորովնետե ԻԻ հնաբերնացիոնալի առաջաղթած միջոցների շնորհիվ, այսոր սոցիալիզմն աշխարհի մի վեցերորդ մասում արդեն կառուցվում եւ։

«Դասակարգային իդեոլոգներ կան . . . վորոնք վորեւ վերաբերմունքը չեն ցույց տալիս դեպի դասակարգային կոփվը» (եջ 49) — ասում եւ Ավդարեգյանը։ Այդ ևս սխալ եւ թեթե մեկը, իրոք դասակարգային իդեոլոգ եւ, ապա նա այս կամ այն կերպ իր վերաբերմունքը այդ ինդրում անպայման զրսերում եւ Ավդարեգյանն իր թեորիան միայն Նալբանդյանի որինակի վրա յեկառուցում, այդ ազելի վատ, վորովնետե Նալբանդյանը, վորակես մանր բուրժուական գաղափարախոս իր վերաբերմունքը դեպի դասակարգային կոփվը ցուցադրել եւ Մանը բուրժուազիան տատանվող եւ, նա վճռական չե, վորովնետե նրա, հեռանկարներն ել վորոշակի չեն և հենց դրան ել համազատասխանում են նրա կոփի մեթոդները։ Բայց չնայած այդ բոլորին, Նալբանդյանն ելի մի քանի տեղ վորոշակի կերպով արտահայտվում եւ հոգուտ բռնի ուժի, և Ավդարեգյանն այդ չի ուրանում։ «Նալբանդյանի կենսագրությունից հայտնի յե, վոր նա վոչ միայն զրով, այլ և սրով աշխատում եր մի կտօր հող ձեռք բերել իր ազգի համար» (եջ 65-66)։

Այս բոլորից հետո արվող յեղակացությունը պարզ է։ Հայկական մենշերզմը, հնարավորություն չունենալով վորեւ այլ կերպ իր ակտիվությունը դրսերի, հարձակումներ և գրքում պրոլետարիատի իդեոլոգիայի վրա և մեր անցյալի ուսումնասիրությամբ ցանկանում եւ իր բուրժուական տեսզենցները սերմանել մեր աշխատավորական մասսաների մեջ։ Սակայն, մարտնչող մատերիալիզմ ինչպես տնտեսական ու քաղաքական կյանքում ջախջախեց բուրժուազիային և նրա բոլոր լակեյներին, նույնն ել կանի և անում եւ, նաև իդեոլոգիայի ասպարիզում։ Վորքան ել կատաղի, վորքան ել վրփը, մենշերզմն, այսոր այլ ևս անկարող եւ մահվան անկողնուց վեր կենալ, բայց միաժամանակ այդ դեռ չի նշանակում, վոր մենք այլևս վոչինչ չունենք անելու, վոչ, Մեր ինդիրն եւ շտապեցնել նրա այդ մահը։

Վորքան շուտ, այնքան լավ։

ՀՀ Ազգային գրադարան



NL0197074

Արտագրիչ Մ. Ստոյան
Համեմատ և տրամադրյան - 8 եռմվար 1984 թ.
Առողջապահ և տպագրվելու 29 եռմվար 1984 թ.
Գլուխիս № 7807 (թ.) Հրամ. № 169, Պատվ. № 9
Տիրամ 3000, 165,000 առ. 6c.
Կութարան Տպարան. Ենթական

64.878
816

ԳԻՒԾ 60 ԿՈՊ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОЗЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Г ел р и
СОВРЕМЕННАЯ ФИЛОСОФИЯ
АРМЯНСКОГО МЕНЬШЕВИЗМА

Партиздан ցհ կթ(բ)ա
Էրևան 1934

329-14
4-13